

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



[www.tester.am](http://www.tester.am) - Գիտելիքների համակարգչային թեստավորում  
- Նախապատրաստվի՝ ավարտական և միասնական  
քննություններին **Թեստեր.am**-ի միջոցով.  
ուղեցույցներ, թեստեր, վերլուծություններ և այլն

Գիրքը տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:

Տպարանակը՝ 41100 օրինակ, 80 Էջ:

Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37

[www.atc.am](http://www.atc.am)

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 373 : 919.81  
Գ.ՄԴ 74.2+81.2Հ  
Հ 282

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՆՃՈՒՄՆԵՐԻ ԴԱՄԱՐ

|            |                                      |                                   |
|------------|--------------------------------------|-----------------------------------|
| Կազմողներ՝ | ՅՈՒՐԻ ՄԻՐՑԱ<br>ՅՈՎՐԱՆԵՍ<br>ԱՇՈՏ ԱՆԳԻ | ԱՎԵՏԻՍՅԱՆ<br>ԴԱՎԻԶՅԱՆ<br>ԶԱՔԱՐՅԱՆ |
| Խնճագիր՝   | ՅՈՒՐԻ                                | ԱՎԵՏԻՍՅԱՆ                         |

Հ 282 «Հայոց լեզվի և հայ գրականության» պետական  
ավարտական և միասնական քննության ուղեցույց:  
Գնահատման և թեստավորման կենտրոն, 2009, 80 էջ:

Ուղեցույցը ներկայացնում է հայոց լեզվի և հայ գրականության  
պետական ավարտական և միասնական քննության թեստի կառուց-  
վածքը, ծրագրային նյութի ընդգրկման սահմանները և առաջադ-  
րանքների տիպերը: Բացատրվում են առանձին առաջադրանքների կա-  
տարման սկզբունքները: Տրվում են հայ գրականությունից ընթերցա-  
նության համար և անգիր հանձնարարվող ստեղծագործությունների  
ցանկերը: Ներկայացվում են նաև թեստի երկու նմուշ և դրանց  
առաջադրանքների պատասխանները:

Գ.Մ.Դ 74.2+81.2Հ

ISBN 978-9939-805-71-9

## Բ Ո Վ Ա Ռ Դ Ա Կ Ո Ւ Թ Ե Յ Ո Ւ Ն

|   |    |
|---|----|
| <b>Նախաբան</b>  | 3  |
| Թեստի կառուցվածքը   | 4  |
| Թեստի բովանդակությունը  | 5  |
| Հայոց լեզու   | 5  |
| Հայ գրականություն   | 8  |
| Հայ գրականության թեստային առաջադրանքների<br>թեմատիկ-բովանդակային սարատեսակներ | 11 |
| Անգիր հանձնարարվող ստեղծագործություններ                                       | 12 |
| Ծրագրային հեղինակներ և ստեղծագործություններ                                   | 13 |
| Բացատրություններ առաջադրանքների կատարման<br>վերաբերյալ                        | 15 |
| <b>Թեստ 1</b>   | 24 |
| Թեստ 1-ի պատասխանները   | 48 |
| <b>Թեստ 2</b>   | 49 |
| Թեստ 2-ի պատասխանները   | 71 |
| Պատասխանների ձևաթուղթը. լրացման կարգը   | 72 |
| Հանձնարարվող գրականություն  | 73 |

## ՆԱԽԱԲԱՆ

Հայոց լեզվից և հայ գրականությունից պետական ավարտական և միասնական քննություններով Հայաստանի Հանրապետությունում 2007թ. սկիզբ դրվեց շրջանավարտների և դիմորդների գիտելիքների ստուգման թեստային նոր եղանակին:

Նոր քննակարգի ընդլայնմանը զուգընթաց կատարվել են թեստի կառուցվածքային և բովանդակային աստիճանական փոփոխություններ: Առաջադրանքների միատիպության սկզբունքը (ընտրովի պատասխաններով առաջադրանքներ) պահպանվում է:

Սույն ուղեցույցի հիմնական նպատակն է ըստ հնարավորին ճշգրտել քննական թեստերում ներառվող նյութի թեմատիկ-բովանդակային սահմանները, որոնք որպես ուղենիշ պիտի ծառայեն ինչպես շրջանավարտների և դիմորդների, այնպես էլ թեստեր կազմողների համար:

Ուղեցույցը կոչված է նաև պարզաբանելու մի շարք հարցեր և օժանդակություն ցույց տալու հետևյալ ոլորտներում՝

- առաջադրանքների կառուցվածքային տիպերի լուծման եղանակների տեսական և գործնական բացատրություն,
- առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակների հստակեցում,
- առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնության որոշակիացում:

Ուղեցույցում տրվում են թեստի 2 նմուշ, ինչպես նաև հայոց լեզվի թեմաների, հայ գրականության առաջադրանքների թեմատիկ տարատեսակների, հայ գրականությունից ընթերցանության և անգիր սովորելու համար հանձնարարվող ստեղծագործությունների ցանկերը, պատասխանների ձևաթղթի նմուշը և դրա լրացման կարգը:

Ուղեցույցում գետեղված թեստերը առաջարկված սկզբունքների իրացման նմուշներ են և չեն ենթադրում պետական ավարտական և միասնական քննությունների թեստերում դրանց բովանդակային մասի և հագեցվածության նույնություն:

2010թ. միասնական ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնադրյուր են ընդունվում հայոց լեզվի և հայ գրականության հին ծրագրերը և դպրոցական դասագրերը:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը պարունակում է ընտրովի պատասխաններով 80 (Ա 1 - Ա 50 և Բ 1 - Բ 30) առաջադրանքներ: Առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանի 4 տարրերակ:

Թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից: Ա մակարդակի առաջադրանքները վերաբերում են ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին: Միասնական քննությունը պարունակում է Ա և Բ մակարդակները: Ա և Բ մակարդակներում ընդգրկված են թե՛ հայոց լեզվի, թե՛ հայ գրականության հարցեր, ընդ որում՝ երկու մակարդակներում ներկայացված են հայոց լեզվի բոլոր բաժինները հետևյալ համամասնությամբ:

| ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ                                  | Ա մակարդակ       | Բ մակարդակ      |
|--|------------------|-----------------|
| • հնչյունաբանություն,<br>ուղղագրություն      | 9 (Ա 1 - Ա 9)    | 4 (Բ 1 - Բ 4)   |
| • բառագիտություն                             | 8 (Ա 10 - Ա 17)  | 5 (Բ 5 - Բ 9)   |
| • ձևաբանություն                              | 9 (Ա 18 - Ա 26)  | 6 (Բ 10 - Բ 15) |
| • շարահյուսություն                           | 9 (Ա 27 - Ա 35)  | 8 (Բ 16 - Բ 23) |
| • ոճաբանություն                              | 1 (Ա 36)         | 2 (Բ 24 - Բ 25) |
| • շարադրանք<br>(տեքստ)                       | 1 (Ա 37)         | 2 (Բ 26 - Բ 27) |
| • ընդհանուր գիտելիքների հայոց լեզվի<br>մասին | 1 (Ա 38)         |                 |
| ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ                            | 12 (Ա 39 - Ա 50) | 3 (Բ 28 - Բ 30) |

## Հանձնարարվող գրականություն

1. Է. Աղայան, Յ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, 4-րդ դասարան, Եր., 1999
2. Ֆ. Խլդարյան, Հայոց լեզու, 5-րդ դասարան, Եր., 1999
3. Ֆ. Խլդարյան, Հայոց լեզու, 6-րդ դասարան, Եր., 1999
4. Ֆ. Խլդարյան, Հայոց լեզու, 7-րդ դասարան, Եր., 1999
5. Ֆ. Խլդարյան, Հայոց լեզու, 8-րդ դասարան, Եր., 1999
6. Գ. Զահուկյան, Ֆ. Խլդարյան, Հայոց լեզու, Ոճաբանություն, 9-րդ դասարան, Եր., 1998
7. Գ. Զահուկյան, Ֆ. Խլդարյան, Հայոց լեզու, Ոճաբանություն, 10-րդ դասարան, Եր., 1998
8. Յ. Բախչինյան, Ս. Սարինյան, Յ. Թամրազյան, Հայ գրականություն, 9-րդ դասարան, Եր., 2000
9. Յ. Թամրազյան, Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Հայ գրականություն, 10-րդ դասարան, Եր., 2000
10. Հայոց լեզու, գրականություն. պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց (կազմողներ՝ Դ. Գյուրջինյան, Ն. Հեքերյան, Ա. Գյողակյան), Եր., 2006
11. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976

## Պատասխանների ձևաթուղթը. լրացման կարգը

2009 թ. Միասնական քննություն  
Պատասխանների ձևաթուղթ  
Հայոց լեզու և Հայ գրականություն

Ազգանուն  
Անուն  
Հայրանուն

Անձնական համար

**Ծվեր ուշադիր**

- Լրացրեք միայն սև գելային գրիչով:
- Չերմերած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (մինչում այսնվայրում նեկու ասելի վանդակներում ցանկացած նշումները սխալ):
- Թվերը գրեք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0

Թեստ № 0 1

|   |   |   |   |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|

**Ա մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Բ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Վ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Դ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Ե մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Զ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Շ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Ռ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Շ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Վ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Հ մակարդակ**

|   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |

**Առաջնային առաջարկություն**

**Ծանոթ Էմբառնության կարգին:**

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջարկանքի համարի ներքևում տրված են չորս վանդակներ: Տվյալ առաջարդանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:

Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված ձեր քննական միավորը:

## ԹԵՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Առաջադրանքները ներառում են 10-ամյա դպրոցի 4 - 10-րդ դասարանների «Հայոց լեզու» դասագրքերում ամփոփված ծրագրային նյութը:

Նկատի ունենալով, որ վերոհիշյալ դասագրքերում տեղ գտած որոշ մեկնաբանություններ և ձևակերպումներ տեղիք են տալիս մասնագիտական տարակարծությունների, հակասություններ ունեն նոր ծրագրերի ու դասագրերի, ինչպես նաև տերմինարանական կոմիտեի և հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների, այլ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի հետ՝ նպատակահարմար է այս փուլում քննական թեստերից բացառել:

Ուղղագրությունից և ուղղախոսությունից՝ հիմքով և վեց ածանցով կազմված բառերի (օր՝ ալի+ա+վետ) ուղղագրությունը, բաղաձայնների և երկինյունների արտասանությունը, օտար ծագման հասարակ և հատուկ անունների շեշտադրությունը,

բառագիտությունից՝ հատուկ բառապաշարը (բացի հնարանություններից, օտարաբանություններից, փոխառություններից), մենինաստ և բազմինաստ բառերի տարբերակումն ու ճանաչումը, բառերի կապակցելիությունը, նույնարմատ և համահունչ համանունները, բարացած ածանցները, կցական բարդությունը, հարադրական բարդությունների տարբերակումը բառակապակցություններից, համառոտագրությունները,

ձևաբանությունից՝ հոլովման և խոնարհման հիմքները, սեռական հոլովը տրականից և հայցականը ուղղականից և տրականից տարբերակական ածականների տարբերակումն ու դերանվանական հոլովումը, դերանվանների խոսքին դաշտում, գոյական, ածական, թվական, մակրայի դերանվանների, բայերի կրկնասեռությունը, ժամանակածների ոճական կիրառությունները, անկանոն և պակասավոր բայերի ճանաչումը խոսքի դուրս, ընդհանրական մակրայնները, կապերի, շաղկապների, ձայնարկությունների իմաստային տեսակները, վերաբերականների այն տեսակները, որոնք արտահայտում են ցուցադրում, հորդոր, խնդրանք, ափսոսանք, ուրախություն, սաստկացում,

շարահյուսությունից՝ ըղձական նախադասությունը, հրամայական նախադասության արտահայտության ձևերը՝ բացի հրամայական եղանակով կազմվածներից և անդեմ նախադասություններից, առդրություն երևույթը, լրացում-լրացյալի տեսակների կապակցման եղանակները, սեռականով որոշիչը, դերանվան որոշիչը, համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը, բազմակի ստորոգյալը և միավորյալ նախադասությունը,

Վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից, բազմաստորադաս, խառը տիպի և բազմաբարդ նախադասությունը,

**ոճաբանությունից ու տեքստաբանությունից՝ իրադրական, անհատական և հեղինակային ոճերը, գործառական ոճերի և պատկերավորման-արտահայտչական միջոցների ենթատեսակները, առձայնութը, համընթացումը, անշաղկապությունը, շարադրանքի (տեքստի) տեսակները և կառուցվածքը,**

**հայոց լեզվի մասին ընդհանուր գիտելիքից՝ գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի և բարբառների լեզվական առանձնահատկությունները, դասական ուղղագրությունը:**

Քննական առաջադրանքներում չեն ընդգրկվելու այնպիսի հարցեր, որոնք կապված են զուգաձևությունների հետ, այնպիսի օրինակներ, որոնք գրական-կանոնական չեն, արձանագրված չեն հանրահայտ բառարաններում, բարբառային, խոսակցական, հազվադեպ գործածվող, հնացած, նեղ մասնագիտական կամ դիպվածային են, օտարաբանություն, հասարակաբանություն կամ կեղծ գրական ձևեր են:

**Հայոց լեզվի թեստային առաջադրանքների թեմատիկ-բովանդակային բաշխում**

#### Հնչյունաբանություն

Չայնավորների արտասանություն և ուղղագրություն

Բաղաձայնների ուղղագրություն

Երկինչյունների ուղղագրություն

և - ի, յ ձայնակապի և կրկնակ բաղաձայնների ուղղագրություն վանկ, շեշտ

Հնչյունափոխություն

Բառերի այբբենական դասավորություն, տառերի թվային արժեք Մեծատառերի ուղղագրություն

Բառերի բաղադրիչների գծիկով, անջատ կամ միասին գրություն

#### Բառագիտություն

Բառ, բառի իմաստ, բազմիմաստ բառեր

Բառի փոխաբերական իմաստ

Դարձվածքներ

Հոմանիշներ

Հականիշներ

Համանուններ, հարանուններ

Բառակազմություն

Բառապաշտի շերտեր. հնաբանություններ, օտարաբանություններ,

փոխառություններ

Բառագործածության սխալի հայտնաբերում

#### Զենքանություն

Խոսքի մասեր

#### Թեստ 2-ի առաջադրանքների պատասխանները

Ա ՄԱԿԱՐՈՒՄԿ

|    |   |
|----|---|
| 1  | 3 |
| 2  | 3 |
| 3  | 3 |
| 4  | 2 |
| 5  | 2 |
| 6  | 4 |
| 7  | 4 |
| 8  | 3 |
| 9  | 2 |
| 10 | 4 |
| 11 | 4 |
| 12 | 3 |
| 13 | 2 |
| 14 | 2 |
| 15 | 4 |
| 16 | 3 |
| 17 | 4 |
| 18 | 3 |
| 19 | 3 |
| 20 | 4 |
| 21 | 3 |
| 22 | 2 |
| 23 | 4 |
| 24 | 3 |
| 25 | 3 |
| 26 | 3 |
| 27 | 1 |
| 28 | 1 |
| 29 | 3 |
| 30 | 4 |
| 31 | 4 |
| 32 | 4 |
| 33 | 4 |
| 34 | 3 |
| 35 | 4 |
| 36 | 4 |
| 37 | 3 |
| 38 | 3 |
| 39 | 3 |
| 40 | 3 |
| 41 | 4 |
| 42 | 2 |
| 43 | 2 |
| 44 | 1 |
| 45 | 4 |
| 46 | 2 |
| 47 | 3 |
| 48 | 4 |
| 49 | 1 |
| 50 | 4 |

Բ ՄԱԿԱՐՈՒՄԿ

|    |   |
|----|---|
| 51 | 1 |
| 52 | 2 |
| 53 | 4 |
| 54 | 3 |
| 55 | 2 |
| 56 | 3 |
| 57 | 4 |
| 58 | 2 |
| 59 | 2 |
| 60 | 1 |
| 61 | 4 |
| 62 | 1 |
| 63 | 4 |
| 64 | 1 |
| 65 | 3 |
| 66 | 3 |
| 67 | 2 |
| 68 | 1 |
| 69 | 3 |
| 70 | 4 |
| 71 | 1 |
| 72 | 2 |
| 73 | 3 |
| 74 | 1 |
| 75 | 4 |
| 76 | 4 |
| 77 | 2 |
| 78 | 3 |
| 79 | 2 |
| 80 | 3 |

**78**

Ո՞ր պնդումն է Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» շարքի վերաբերյալ ճիշտ.

- 1) Պատկերված է իրական կյանքը:
- 2) Յայ ժողովրդի պաքարի ու մաքառման պատմությունն է:
- 3) Ստեղծված է ուժը և գեղեցկությունը փառաբանող ռոմանտիկ աշխարհի:
- 4) Գյուղական ներդաշնակ կյանքի նկարագրություն է:

**79**

Ինչո՞ւ է Լ. Շամբի «Հին աստվածներ» դրամայի հերոսներից Աբեղան, նետվելով ծովը, ինքնասպան լինում.

- 1) Սեղան վերջնականապես մերժում է Աբեղային և իրաժարվում նրա հետ հանդիպելուց:
- 2) Նրա մեջ իրար են բախվում երկու աշխարհ՝ կյանքի բուրն սերը ու անհատի բանական ձգտումը դեպի Աստված:
- 3) Վանահայրը չի կարողանում կառուցել և ավարտին հասցնել նոր եկեղեցին՝ հավատի շենքը:
- 4) Բացվում է տաճարի կառուցման գաղտնիքը:

**80**

Ո՞ր հատկանիշն է ընդհանուր նորավեպի և պատմվածքի համար.

- 1) Աչքի են ընկնում սրընթաց գործողությամբ:
- 2) Պատկերվող դեպքն ունի բացառիկ բնույթ:
- 3) Պատկերվում է կյանքի նեղ շրջանակ՝ մեկ դեպք, մեկ իրադարձություն:
- 4) Գործողությունն ունենում է անսպասելի վախճան:

Գոյական. հոգնակիի կազմություն

Յոլովում և հոլովներ, հոդեր

Բայ, խոնարհման տեսակները, բայի սեռ, բայի կազմություն

Դերբայներ և ձևաբայեր

Դիմավոր ձևեր, դրական և ժխտական խոնարհում

Անկանոն և պակասավոր բայեր

Ածական. համեմատության աստիճանները

Թվական. տեսակները

Դերանուն. տեսակները

Մակրայ

Կապ, շաղկապ, ձայնարկություններ, վերաբերականներ

Քերականական ճիշտ և սխալ ձևեր

Զևաբանական վերլուծություն

### Ծարահյուսություն

Բառակապակցություն, նախադասություն

Նախադասության կառուցվածքային և հաղորդակցական տեսակներ

Կապակցության եղանակներ. խնդրառություն, համաձայնություն

Խնդրառության կամ համաձայնության սխալի հայտնաբերում

Ծարադասություն

Նախադասության անդամներ

Դերբայական դարձվածք

Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններ

Բարդ նախադասության տեսակները

Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցում

Ստորադաս նախադասության բնույթ (շարահյուսական դեր)

Ծաղկապի գործածություն

Պարզ և բարդ նախադասությունների փոխակերպում

Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք. փոխակերպում

Կետադրություն

Պատկերավորման-արտահայտչական միջոցներ

Գործառական ոճեր

### Ծարադրանք (տեքստ)

Նախադասությունների դասավորում ըստ տրամաբանական և քերականական կապի

Պարբերությունների դասավորում ըստ տրամաբանական և քերականական կապի

Ծարադրանքին (տեքստին) իմաստով հակասող (չհակասող) նախադասության հայտնաբերում

Ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվի վերաբերյալ

### ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹ ՅՈՒՆ

Առաջադրանքները ներառում են հայ գրականության 9-րդ և 10-րդ դասարանների դասագրքերում ամփոփված ծրագրային նյութը: Դայոց լեզվի և հայ գրականության միասնական թեստերով քննություն հանձնող շրջանավարտը կամ դիմորդը պարտավոր է ոչ միայն յուրացնել դպրոցական դասագիրքը, այլև կարդալ հանձնարարվող գեղարվեստական գրականությունը և անգիր սովորել այն բանաստեղծություններն ու հատվածները, որ նախատեսվում են սույն ուղեցույցում գետեղված ցանկով:

Շատ կարևոր է հայ գրականությունից քննական թեստերում ընդգրկվող նյութի սահմանների որոշարկման խնդիրը:

**Ընդհանուր մոտեցումը հետևյալն է. բովանդակային առաջադրանքներ տրվելու են միայն այն հեղինակներից և այն ստեղծագործություններից, որոնք արձանագրված են ուղեցույցում գետեղված ցանկում: Ցանկում չնշված, բայց դասագրքում հիշատակված հեղինակների ստեղծագործությունների վերաբերյալ կարող են տրվել միայն ճանաչողական հարցեր՝ հեղինակի, ժամրի, թեմայի, ընդհանուր գաղափարի վերաբերյալ:**

1. **Մեջբերումներ:** Գրական ստեղծագործությունից (արձակ կամ չափածո) դասագրքում կատարված մեջբերումների անգիր իմացությունը, ըստ ծրագրի, պարտադիր չէ, եթե, իհարկե, տվյալ ստեղծագործությունը նշված չէ անգիր հանձնարարվող նյութերի ցանկում: Գիտելիքներ ստորգելու համար չեն առաջադրվելու այնպիսի հարցեր, որոնք ենթադրում են մեջբերումների անպայման անգիր իմացություն: Սակայն այն հանգամանքը, որ քննության թեստերում մեջբերումների վերաբերյալ հարցեր են առաջադրվելու, ենթադրում է դրանց լավ իմացություն: Օրինակ՝ ծրագիրը չի հանձնարարում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից 9-րդ դասարանի դասագրքում մեջբերված հատվածներն անգիր անել, սակայն քննություն հանձնողը հարցման դեպքում պարտավոր է իմանալ, որ դրանք պատկանում են հենց Նարեկացու գրչին կամ հենց «Մատյան»-ից են, պետք է լավ ծանոթ լինի դրանց բովանդակությանը, կարողանա դրանց վերաբերյալ դատողություններում ճիշտ կողմնորոշվել և այլն: Մեջբերված խոսքերի անգիր իմացությունը պարզապես ցանկալի է, քանի որ մեծ չափով հեշտացնում է առաջադրվող հարցերի ճշգրիտ լուծումը:

2. **Գրական երկի կառուցվածքային հատկանիշներ,** գրական տեսակներ, չափածոյի տաղաչափական յուրահատկություններ, գրական ուղղություններ և այլն: Սրանք քննական թեստերում ներառվելու են այնքանով, որքանով ներկայացված են դասագրքում: Օրինակ՝ չի կարող թեստում հայտնվել այն գրական տեսակի կամ դրա որևէ հատկանիշի վերաբերյալ հարց, որի մասին դասագրքում որոշակի գիտելիք չի

4. **Պահպանվել և այժմ էլ կանգուն է, ի դեպ, այդ ժամանակների օլիմպիական խաղերի հաղթողների մարմարե անվանատախտակը, որտեղ նշված անունների շարքն ավարտվում է հայոց Վարազդատ Արշակունի թագավորի անվամբ: Նա 393 թ. տեղի ունեցած վերջին օլիմպիական խաղերի բնոցքամարտի մրցումների հաղթողն էր:**

- 1) 2, 4, 3, 1
- 2) 3, 2, 1, 4
- 3) 2, 4, 1, 3
- 4) 3, 2, 4, 1

77

**Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը.**

Լուսինը Երկրի միակ բնական արբանյակն է: Դրա ծագումը դեռևս թեժ վեճերի առարկա է: Որոշ գիտնականներ կարծում են, որ Երկիրն ու Լուսինը միասին են առաջացել գագի ու փոշու նախնական ամպից: Մյուսները պնդում են, որ Լուսինը Երկրի ծգողական դաշտից գերված մարմին է: Ոմանք էլ կարծում են, որ Մարսի չափերի մի մարմին է բախվել Երկրին: Բախման բեկորները սփռվել են տարածության մեջ, և նրանց մի մասն առաջացրել է Լուսինը:

- 1) Ըստ վարկածներից մեկի՝ Լուսինը Երկրի բնական արբանյակն է դարձել Երկրի ծգողական դաշտի հետևանքով:
- 2) Որոշ գիտնականներ կարծում են, որ Երկրի բեկորներ են Մարսը և Լուսինը, որ առաջացել են բախման հետևանքով:
- 3) Գոյություն ունի Երկրի ու Լուսինի՝ գագի ու փոշու նախնական ամպից միաժամանակ առաջացած լինելու մասին վարկած:
- 4) Ոմանց կարծիքով Լուսինը առաջացել է Երկրի և մի այլ մարմնի բախման հետևանքով տարածության մեջ սփռված բեկորներից:

**74****Ո՞ր պնդումը ճիշտ չէ բաղաձայնութիւնի վերաբերյալ.**

- 1) Բնորոշ է հրապարակախոսական ոճին:
- 2) Ստեղծում է բարեհնչություն և նվազայնություն:
- 3) Հաջող կիրառության դեպքում նպաստում է բանաստեղծական պատկերի կառուցմանը:
- 4) Ստեղծվում է ոչ միայն նույն բաղաձայնի, այլև նման բաղաձայն հնչյունների կրկնությամբ:

**75****Ո՞ր հատվածում չկա անձնավորում.**

- 1) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն...
- 2) Յոգիս արթնացավ հարավի բույրից,  
ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա...
- 3) Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ....
- 4) Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

**76****Պարբերությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) քերականական և տրամաբանական ճիշտ կառուցվածքին.**

1. XIX դարի վերջին տեղի ունեցավ օլիմպիական խաղերի երկրորդ ծնունդը: 1896 թ. Յունաստանի մայրաքաղաք Աթենքում կայացան մարզական խոշորագույն միջազգային մրցություններ: Այդ ժամանակից ի վեր չորս տարին մեկ անցկացվում են ժամանակակից օլիմպիական խաղերը: 1924 թ. սկսած՝ կազմակերպվում են նաև ձմեռային օլիմպիական խաղեր:
2. Օլիմպիական այդ խաղերը համահունական տոնակատարություն էին և կազմակերպվում էին չորս տարին մեկ: Մասնակիցները մրցում էին արագ վազքով, ընթացարտով, ցատկով, նետումով, բռնցքամարտով, կառարշավով: Խաղերի ժամանակ կազմակերպվում էին նաև արվեստներից մրցություններ:
3. 28 դար առաջ Յունաստանում սկսեցին կազմակերպել մրցություններ, որտեղ մարզիկները մրցում էին ուժով, ճարպկությամբ ու արագաշարժությամբ: Ամենախոշը ու նշանավոր մարզական մրցությունները կազմակերպվում էին Օլիմպիա քաղաքում և ստացան օլիմպիական խաղեր անվանումը:

**տրվում:** Այսպես՝ վեպը, պատմվածքը, նորավեպը, առասպելը, վիպերգը (եպոսը), առակը, պոեմը (իր տարատեսակներով՝ քնարական, քնարակախկական և էպիկական), գագելը, հայրենը, քառյակը, դրաման, կատակերգությունը, ողբերգությունը և այլն՝ որպես գրական երկի տեսակներ կամ ժանրեր, բավարար չափով ներկայացված են դասագրքում, և դրանց վերաբերյալ կարող են առաջարկանքներ տրվել: Իսկ, օրինակ, գրական դիմանկարի, եղերեգի, գանձի, բանքի, սոցիալական վեպի, մենագրական վեպի, հուշագրության վերաբերյալ դասագրքում այդպիսի գիտելիքներ չեն տրվում, ուստի և դրանք չեն կարող հարցման առարկա դառնալ:

**3. Յերսուներ, կերպարներ, գործող անձինք, դիպաշար (սյուժե):** Գրականության իմացության հիմնական ուղին գրական երկի ընթերցումն է: Իսկ ինչպես ստուգել՝ կարդացել՝ է աշակերտը այս կամ այն ստեղծագործությունը, թե՞ ոչ:

Քնարական թեստերում հարցի կամայական լուծումներից խուսափելու համար պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքով. Վերը նշված խնդիրների վերաբերյալ առաջարդանքներ պետք է տրվեն միայն այնքանով, որքանով դրանք հանգամանորեն, այսինքն՝ որոշակի մանրանասնություններով և ըստ էության են ներկայացված դասագրքում:

Գրական երկի բնագիրը կարդացած լինելու խնդիրը բավարար չափով ստուգվում է հայ գրականության բաժնում զետեղված առաջարդանքներով: Ծրագրային ստեղծագործությունների ստորև բերված ցանկում նշված երկերի բնագրի իմացության վերաբերյալ հարցեր չափությունը է լինեն:

Քննություն հանձնողը դպրոցական դասընթացից ստացած գիտելիքների շրջանակում բավարար պատկերացում պետք է ունենա, օրինակ, գրական երկի դիպաշարի (սյուժեի) և դրա զարգացման աստիճանների (նախադրություն, հանգույց, բախում և գործողությունների զարգացում, գագաթնակետ և լուծում) մասին, կարողանա կողմնորոշվել գրական այս կամ այն երկում դրանք տարբերակելիս: Այս կարգի առաջարդանքները հաջողությամբ կարող է կատարել նաև, ով ոչ միայն յուրացել է դասագրքային սահմանումներն ու վերլուծությունները, այլև կարդացել է բնագիրը:

**4. Կենսագրական տվյալներ, երկերի, բանաստեղծական ժողովածուների, շարքերի և այլ փաստական նյութերի մասին գիտելիքներ:** Կենսագրական որոշ փաստերի, ժողովածուների հրատարակության թվականի, ժողովածուում ընդգրկված բանաստեղծությունների վերնագրերի և նման փաստական տվյալների յուրացումը, ինչ խոսք, դեռևս գրականության բավարար իմացություն չէ: Սակայն գրական երկի ընկալումը և գրողի ստեղծագործական աշխարհի բացահայտումը անպայման ենթադրում են այս նյութի գոնե բավարար իմացություն: Քննություն հանձնողը պարտավոր է հիշել, օրինակ,

«Սասմա ծոեր» վիպերգի ստեղծման դարաշրջանը, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ֆրիկի, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի և դասագրքում առանձին խորագրերով ներկայացվող մյուս բոլոր հեղինակների ապրած ժամանակաշրջանները, գրականգեղարվեստական գործընթացի մեջ էական դեր կատարած ստեղծագործությունների կամ ժողովածուների, օրինակ, Խաչատուր Աբովյանի «Վերը Յայաստանի» վեպի, Ռաֆֆու «Սամվել», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» և Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպերի, Վահան Տերյանի «Մբնշաղի անուրջներ» ժողովածուի, Յովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի, Լևոն Շանթի «Յին աստվածներ» դրամայի և այլ գործերի ստեղծման դարաշրջաններն ու հրատարակության տարեթվերը, ինչպես նաև դասագրքում հանգանանորեն ներկայացված այլ ժողովածուների ու բանաստեղծական շարքերի խորագրերը:

Կենսագրական տվյալներից ցանկալի է կեղծանվամբ հայտնի գրողների իսկական անուն-ազգանունների, գրական առավել խոշոր դեմքերի ծննդյան ու մահվան թվականների, նրանց գրական և հասարակական գործունեության կարևոր դրվագների, ինչպես նաև հայ գրականության պատմության համար էական մի շարք կարևոր իրողությունների իմացությունը, եթե դասագրքում դրանք ներկայացված են (օրինակ՝ Միհրարյան միաբանություն, «Վերնատուն» գրական խմբակ, Յայ գրողների կովկասյան ընկերություն, նորագույն հայ գրականության սկզբնավորման ժամանակաշրջան):

Յայ գրականության փաստական նյութի իմացությունը ստուգվում է հիմնականում Ա մակարդակում ներկայացված առաջադրանքներով, իսկ դիմորդի վերլուծական կարողությունները՝ գերազանցապես Բ մակարդակում ստեղծագործության գաղափարական-բովանդակային կամ կառուցվածքային և գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ առաջադրանքներով:

72

**Պատասխանների ո՞ր տարրերակի մեջ են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում նախադասության մեջ ստորակետ պիտի լինի:**

Մի բարձրահասակ մարդ (1) պատկառելի դեմքով (2) ելումուտ էր անում Կոստանդին կայսեր շքեղ արքունիքում:

Մի միջատ որ (3) ըստ Երևույթին (4) կարող էր նույն հաջողությամբ թե թռչել (5) և թե վագել (6) բարձրանում էր պատն ի վեր (7) և քիչ հետո նրա ստվերն ամհետանում էր ձեղունին բուսած խոտերի մեջ:

Օդը ցուրտ էր (8) վաղ գարնանային:

Աշնանը բերքահավաքի ժամանակ (9) մարդիկ արտերի եզրին խարույկ էին վառում որպեսզի արջերը չտրորեն կորեկը:

Աշխարհի տարբեր բեմերից հնչում է Արամ Խաչատրյանի հոչակավոր հայ կոմպոզիտորի (10) երաժշտությունը:

- 1) 1, 2, 6, 7, 9, 10
- 2) 2, 3, 4, 6, 7, 8, 9
- 3) 2, 3, 4, 6, 7, 9
- 4) 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10

73

**Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա.**

1. Աղջիկը գնացքի պատուհանի մոտ նստած՝ նայում էր Երկաթուղագիծի երկայնքով սահող դաշտերին ու գյուղերին:
2. Երբ նա փակում էր աշքերը, նրա ուղեկիցները՝ երկու բարեհամբույր մարդիկ՝ մի զինվորական և նրա կինը՝ նրա դեմքին թախիծ էին տեսնում:
3. Երբեմն սրափվելով՝ աղջիկը շարունակում էր պատուհանից դուրս նայել. չէր ցանկանում, որ ուղեկիցները զգային իր հուզմունքը:
4. Նա շիկահեր էր՝ գեղեցիկ դիմագծերով:
5. Մինչ աղջիկը դուրս էր նայում, իսկ ուղեկիցները՝ նրան, գնացքը մոտենում էր կայարանին:
6. Շոգեքարշի՝ կայարանին հասնելը ազդարարող սուլոցը վերջնականապես սրափեցրեց աղջկան:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**70**

**Բարդ ստորադասական նախադասության պարզեցման  
ո՞ր տարրերակն է ճիշտ.**

Մարդկանց քար կտրած դեմքերը խորհրդավոր էին թվում, քանի որ տեղ-տեղ լույսով էին թաթախված, տեղ-տեղ՝ թանձր ստվերներով:

- 1) **Տեղ-տեղ լույսով, տեղ-տեղ թանձր ստվերներով թաթախվելուց քար կտրած մարդկանց դեմքերը խորհրդավոր էին թվում:**
- 2) **Մարդկանց քար կտրած դեմքերը՝ տեղ-տեղ լույսով, տեղ-տեղ թանձր ստվերներով թաթախված, խորհրդավոր էին թվում:**
- 3) **Տեղ-տեղ լույսով, տեղ-տեղ թանձր ստվերներով թաթախված մարդկանց քար կտրած դեմքերը խորհրդավոր էին թվում:**
- 4) **Մարդկանց քար կտրած դեմքերը խորհրդավոր էին թվում տեղ-տեղ լույսով, տեղ-տեղ թանձր ստվերներով թաթախված լինելու պատճառով:**

**71**

**Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:**

- Շատ եմ ուզում Արագածի գագաթը բարձրանալ,- ասում էր Յակոբն Արամին,- ընկերացի՝ ինձ:

- 1) **Յակոբն Արամին ասում էր, որ ինքը շատ է ուզում Արագածի գագաթը բարձրանալ, թող նա ընկերանա իրեն:**
- 2) **Ասում էր Յակոբն Արամին, որ եթե նա շատ է ուզում Արագածի գագաթը բարձրանալ, թող ընկերանա իրեն:**
- 3) **Յակոբն ասում էր Արամին, որ նա շատ է ուզում Արագածի գագաթը բարձրանալ, ընկերանա իրեն:**
- 4) **Յակոբն Արամին ասում էր, թե շատ է ուզում Արագածի գագաթը բարձրանալ, թող ինքը ընկերանա նրան:**

**ԴԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՊԱԶՈՐԱՆՔՆԵՐԻ  
ԹԵՍՏԻԿ-ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ**

- Դեղինակի ապրած ժամանակաշրջանի ինացություն
- Դեղինակի կամ նրա ծրագրային երկի մասին նշանավոր ասույթի ճանաչում
- Ստեղծագործության ընդհանուր բնութագիր
- Ստեղծագործության, ժողովածուի կամ շարքի ճանաչում
- Ստեղծագործության, ժողովածուի կամ շարքի կառուցվածքային կամ ժամրային բնորոշում
- Ստեղծագործության, ժողովածուի կամ շարքի թեմատիկ բնորոշում
- Ստեղծագործության հատվածի բովանդակության ու վերնագրի կամ դիպաշարային (սյուժետային) դրվագի ինացություն
- Անգիր հանձարարված նյութի ինացություն. տողերի դասավորում կամ բաց թողած բարի կամ բառերի լրացում
- Հատվածի՝ որ կամ ում ստեղծագործությունից լինելու ինացություն
- Գլխավոր հերոսի կամ հերոսների խմբի, նրանց և միջավայրի առնչությունների ճանաչում կամ բնութագրում
- Յերոսին բնութագրող խոսքի (իր կամ ուրիշի կամ հեղինակի) ճանաչում
- Գրական տեսակների, հեղինակների դավանած ուղղությունների, հոսանքների ինացություն
- Երկի ընդհանուր բովանդակության ինացություն
- Երկերի առնչությունների, սկզբնաղբյուրների և ստեղծման շարժառիթների ինացություն

## ԱՆԳԻՐ ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մովսես Խորենացի -** «Դայոց պատմություն» («Թեակտ և ենք ածու փոքր...») բառերից մինչև «և արժանի գրոց յիշատակի» բառերը (գրաբար) Գողթան երգեր (դասագրքի հատվածները) (գրաբար)
- Գրիգոր Նարեկացի -** «Տաղ վարդավարի» (դասագրքի հատվածը՝ «Գոհար վարդն...») (գրաբար)
- Նահապետ Քուչակ -** «Երբ սէրն ի յաշխարհս եկաւ», «Ես աչք ու դու լոյս, հոգի», «Քանի՞ ու քանի՞ ասեմ»
- Մ. Նալբանդյան -** «Ազատություն», «Էտալացի աղջկա երգը» (առաջին 7 քառատողը)
- Պ. Դուրյան -** «Լճակ»
- Դ. Թումանյան -** «Դայոց լեռներում», քայլակներ («Զուր եմ փախչում, ինձ խարում», «Քանի՞ ձեռքից եմ վառվել», «Աղբյուրները հնչում են ու անց կենում», «Լինե՞ր հեռու մի անկյուն», «Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ»), «Անուշ» (նախերգանքը), «Թմրկաբերդի առումը» (նախերգանքը), «Փարվանա» («Եսպես անցան շատ տարիներ» տողից մինչև «Ու շենքերը փառավոր» տողը)
- Ա. Իսահակյան -** «Դայրենիքիս», «Ռավեննայում», «Արու-Լալա Մահարի» (3-րդ սուրահի սկզբից 16 տող, մինչև «...ամեն հնչյունին վերջ, սկիզբ չկա» տողը)
- Դ. Վարուժան -** «Զոն», «Դումճք կը ժողվեմ»
- Լ. Շանթ -** «Դին աստվածներ» («Իշե՛ք, իշե՛ք, երազնե՛ր» հատվածը)
- Մ. Մեծարենց -** «Սիրերգ» («Գիշերն անույշ է...»), «Աքասիաներու շուրին տակ»
- Վ. Տերյան -** «Տիրություն», «Fatum», «Գարում», «Մի՞թե վերջին պոետն են ես»
- Ե. Չարենց -** «Վահագն», «Տաղ անձնական», «Ելի գարում կգա», «Ես իմ անուշ Դայաստանի»
- Դ. Շիրազ -** «Կուգեի նստել մի քարի վրա», «Թագադրում», «Դայ ժողովրդի երգը»
- Ր. Սահյան -** «Զես ասի ոչ մի բառով», «Անունդ տալիս»
- Պ. Սևակ -** «Անլոելի զանգակատուն» («Գարում էր: Չեկած անառ» տողից սկսած՝ 26 տող)

## 67 Ընդգծվածներից քանի՞սն են նախադասություն.

1. Մեքենան ուր որ է պիտի երևար ոլորանի հետևից:
2. Իմ սիրած հայ բանաստեղծներն են՝ **Տերյան, Չարենց, Սևակ**:
3. **Եվս մի ակնթարթ**, ու բոլորն ամեն ինչ կհասկանային:
4. Նայում էինք իրար. նա՝ ինձ, **Ես՝ Արամ**:
  - 1) մեկը
  - 2) երկուսը
  - 3) երեքը
  - 4) ոչ մեկը

## 68 Ո՞ր նախադասության մեջ որոշիչ չկա.

- 1) Ներկաները, իյուրի արարքից զարմացած, ուշադիր նրան էին նայում:
- 2) Ո՞ր մեղքիս համար ես պատժում ինձ:
- 3) Վաղուց արդեն զգացվում էին ուշ աշնան նշանները:
- 4) Կամուրջը կապում էր գետի երկու ափերը:

## 69 Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել՝ քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն ստանալու համար.

....., որ կարծես միայն վերելք պիտի ունենար:

- 1) Դայ իրականության մեջ մշակութային մի աշխույժ եռուզեռ ստեղծվել էր այն ժամանակ
- 2) Այդ ժամանակ ստեղծվել էր մշակութային մեջ եռուզեռ հայ իրականության մեջ
- 3) Այդ ժամանակ հայ իրականության մեջ ստեղծվել էր մշակութային մի աշխույժ եռուզեռ
- 4) Դայ իրականության մեջ մշակութային մի աշխույժ եռուզեռ այն ժամանակ էր ստեղծվել

**63 Ո՞ր նախադասության մեջ հրամայականի սխալ ձև կա.**

- 1) Ծտապո՞ղ մարդիկ, կանգնեցե՞ք, կանգնե՞ք:
- 2) Անցո՞րդ, ջրին ակա՞նջ արա Եվ խոնարհվի՞ր այս կորողին:
- 3) Մի՞ հարցորդ ոչինչ դու մեզ...
- 4) Նստի՛ր կանաչ ուռենու տակ, Խմի՛ր և մի՛ լինի տրտում...

**64 Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ կա.**

- 1) Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր Յրեղեն խոսքեր կրեմ ու խնդամ:
- 2) Ինչ որ չի մնա, կտանի քամին. Յարդը գնում է, ցորենն է մնում:
- 3) Ո՞ր ջուրն ինձ խեղդեց, ես նրան ծով կասեմ:
- 4) Լոեց, ապա վերցրեց աբորին նետված գլխարկը և դուրս եկավ բակ:

**65 Փակագծում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարրերակն է ճիշտ.**

Վաղարշապատում հրաշք ..... քաղաքի կենտրոնում՝ հին մեհյանի տեղում, լուս իջավ երկնքից՝ ի տես բոլոր ..... նրանք ..... հրաշքի խորհուրդը, և այդտեղ տաճար ..... առաջին քրիստոնեական տաճարը:  
(1. կառուցել, 2. հասկանալ, 3. կատարել, 4. մարդ)

- 1) կատարեցին, մարդկանց, հասկացան, կառուցեցին
- 2) կառուցեցին, մարդկության, կատարեցին, հասկացվեց
- 3) կատարվեց, մարդկանց, հասկացան, կառուցվեց
- 4) կառուցվեց, մարդկանց, հասկացան, կատարեցին

**66 Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա.**

- 1) Եղբայրներիս հայտնած լուրը, որ արտասահման են մեկնելու, հանգիստ չեր տալիս ինձ:
- 2) Արշակը, երբ դասը սովորած չի լինում, նախընտրում է դպրոց չգնալ:
- 3) Նա վերադարձել էր ոչ թուն, այլ գնացել էր խնջույքի:
- 4) Յիացմունքից կարկանած՝ ճանապարհորդները դիտում էին ժայռերի միջև սեղմված հունով հոսող գետի փրփրացայտ ալիքները:

**ՊԱՐՏԱԴԻՐ ԸՆԹԵՐՁԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՐ ԴԱՇՎԱՐԱՎՈՐ  
ՍՏԵՂՕՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Մովսես Խորենացի -** «Յայց պատություն»-ից՝ Յայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Վահագնի, Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Արտավազդի նասին, «Ողբ», Գիրք Երրորդ, գլուխ ԽԵ. «Երանելի Սեսրուի նասին», գլուխ ԾԲ. «Դանիելյան նշանագիրների նասին», գլուխ ԾԳ. «Մեսրոպյան նշանագիրների նասին, որ տրվեցին Երկնային շնորհով» (համահավաք բնագիրը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով)

**«Սասմա ծռեր»**

**Գրիգոր Նարեկացի -** «Տաղ Վարդավառի», «Մեղեդի ծննդյան», «Մատյան ողբերգության», բան Գ, հատված Բ («Սորակերտ մատյանն այս ողբերգության...» տողից մինչև «Դանապազ մեծիդ բարեգործության դիմելու համար» տողը), բան ԺԵ, հատված Ա («Աղաչում են թեզ՝ բոլոր չարաշար ու տաժանելի...» տողից մինչև «Մեծու փոքրիս հետ, լուսոդ՝ խավարիս...» տողը) (Վ. Գևորգյանի բարգմանությամբ)

**Ներսես Շնորհալի -** «Ողբ Եղեսիո» («Ինձնից կյանքի ջուր էր բխում» տողից մինչև «Ուսկեննան շողն էր փայլում» տողը և «Բայց և թեզ են հրավիրում այստեղ» տողից մինչև «Դեռավորին՝ փափագելի» տողը)

**Միսիթար Գոշ -** «Արջ և մրջուն»), «Բամբակենի և սոսի»

**Վարդան Այգեկցի -** «Իմաստուն զինվոր», «Իշխան և այրի կին»

**Ֆրիկ -** «Գանգատ», «Բան պիտանի»

**Նահապետ Քուչակ -** Հայրեններ

**Սայաթ-Նովա -** «Դուն էն գլխեն իմաստուն իս», «Աշխարունս ախ չին քաշի», «Թամամ աշխար պտուտ էկա», «Աշխարս մե փանջարա է»

**Խ. Աբովյան -** «Վերք Յայաստանի» վեպից «Դառաջաբանը» և Երրորդ գլուխը

**Մ. Նալբանդյան -** «Մանկության օրեր», «Իտալացի աղջկա երգը»

**Պ. Դուրյան -** «Սիրել», «Դրժել», «Տրտումքը», «Իմ ցավը»

**Րաֆֆի -** «Սամվել»

**Յ. Պարոնյան -** «Մեծապատիվ մուրացկաններ»

**Մուրացան -** «Գևորգ Մարգաբետունի»

- Շիրվանզադե -** «Քառս», «Պատվի համար»
- Գ. Զոհիրապ -** «Այինկա», «Չարուղոն», «Երջանիկ մահը», «Փոստալը», «Այրին», «ճիտին պարտքը»
- Դ. Թումանյան -** «Դայրենիքիս հետ», «Անուշ», «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Քաջ Նազար», քայլակներ
- Ա. Խսահակյան -** «Մի մրահոն աղջիկ տեսա», «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Դայրենիքիս», «Դավերժական սերը», «Պանդուխտ որդին», «Դայրենի հողը», «Արու-Լալա Մահարի», «Լիլիթ», «Դամբերանքի չիբուխը»
- Դ. Վարուժան -** «Չարող», «Դացին երգը» շարքից «Արտերուն հրավերը», «Ցորյանի ծովեր», «Կամներգ»
- Լ. Շանթ -** «Դին աստվածներ»
- Մ. Մեծարենց -** «Վայրկյան», «Արևին», «Ձրտուք», «Յյուղը»
- Վ. Տերյան -** «Աշնան մեղեղի», «Որպես Լաերտի որդին...», «Իջնում է գիշերն անգուք ու մթին...», «Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Շշուկ ու շրջուն», «Դրաժեշտի գաղել»
- Ե. Չարենց -** «Տաղարան» շարքը, «Անվերնագիր» («Իմ մահվան օրը կիշնի լրություն...»), «Դանթեական առասպել», «Դարդագողի ճամփորդները», «Մահվան տեսիլ» («Որպես լրված թափութակի...»), «Ամբոխները խելագարված», «Գանգրահեր տղան», «Դեպի Սառը Մասիս»
- Դ. Ղեմիրճյան -** «Վարդանանք»
- Ը. Շահնուր -** «Նահանջը առանց երգի»
- Ա. Բակունց -** «Մբնաձոր», «Միրիավ», «Ալպիական մանուշակ», «Ծիրանի փողը», «Խոնարի աղջիկը»
- Գ. Մահարի -** «Ծաղկած փշալարեր»
- Ն. Զարյան -** «Արա Գեղեցիկ»
- Յ. Շիրազ -** «Մայրս», «Բիբլիական», «Գարնանամուտ»
- Ի. Սահյան -** «Քարավիլ», «Մասրենի», «Ինչո՞ւ հիշեցրի», «Անտառում», «Կգամ»
- Պ. Սևակ -** «Անլոելի զանգակատուն», «Վարք մեծաց», «Պարապություն»
- Հ. Մաթևոսյան -** «Աշնան արև»

**59** Զախ սյունակի բառերից յուրաքանչյուրը փոխաբերական իմաստով կարող է գործածվել աջ սյունակի բառերից միայն մեկի հետ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- |              |          |
|--------------|----------|
| ա. գթության  | 1. գառ   |
| բ. անմեղ     | 2. բերան |
| գ. անմահական | 3. քույր |
| դ. անդուռ    | 4. գդալ  |
| ե. անպոչ     | 5. խնձոր |

- 1) ա - 1, թ - 3, զ - 5, դ - 2, ե - 4
- 2) ա - 3, թ - 1, զ - 5, դ - 2, ե - 4
- 3) ա - 2, թ - 1, զ - 5, դ - 3, ե - 4
- 4) ա - 3, թ - 2, զ - 5, դ - 1, ե - 4

**60** Ո՞ր նախադասության մեջ առաջ-ը մակրայ չէ.

- 1) Մեզանից դեռ հազարամյակներ առաջ այդ մասին գիտեին:
- 2) -Առաջ անցիր, դու պետք է մեզ ուղեկցես:
- 3) Առաջ այդ մասին կարելի էր միայն երազել:
- 4) Շարժվեցինք առաջ, և մեր դիմաց բացվեց մի հրաշալի տեսարան:

**61** Ո՞ր օրինակում ընդգծված դերանունը գործողության հատկանիշ կամ հանգանանք չի մատնանշում.

- 1) Իսկ որտեղի՞ց պիտի տա Արտաշեսը քաջ Դազար հազարներ...
- 2) Ինչպե՞ս խեղդենք իսկ խռովքը Սասնա տան, Ինչպե՞ս մարենք այսքան կարոտ, վազք ու կիրք...
- 3) Ո՞ր են վազում ծեր ու ջահել, Մարդկանց այս ի՞նչ է պատահել...
- 4) Քանի՞ ծերքից եմ վառվել, Վառվել ու հուր եմ դարձել...

**62** Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ կա.

- 1) Եվ հեռվում ինչ-որ ուշացած Զիերի դոփյուն եմ իշխում:
- 2) Քամին սարերից Առաջին ձյունի փոշին է բերում...
- 3) Խարույկն իր խաղաղ ծուխն էր ծածանում...
- 4) Սիրում եմ աչքերիդ տիրությունը խորին...

**55**

**Տրված իմաստներից ո՞րն է ավելորդ *խոյակ, մահիկ, նշտար* բառերի համար.**

- 1) լուսնի մանգաղ
- 2) տաք, այրող քամի
- 3) վիրաբուժական դանակ
- 4) քանդակազարդ սյունագլուխ

**56**

**Դամար բառի նշված իմաստներից ո՞րն է սխալ.**

- 1) հյուրանոցի սենյակ
- 2) հաջորդական կարգը ցույց տվող թիվ
- 3) միևնույն արժեքն ունեցող մեծություններից ամեն մեկը
- 4) կրկեսային ներկայացման առանձին կատարվող հատված

**57**

**Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.**

- ա. Սոնան թախիծով (1. թոթովեց, 2. թոթվեց) ուսը և արագ հեռացավ:
- բ. Տնօրենը վաստ էր (1. վերաբերում, 2. վերաբերվում) իր աշխատակիցներին:
- գ. Փորձառու մարզիչը վերջին (1. ցուցումներն, 2. սաներին, թեև վերջիններս քաջածանոթ էին տեղանքին):
- դ. Փողոցով անցնում էր միջին տարիքի մի կին՝ գլխին (1. հովհարով, 2. հովարով) սպիտակ գլխարկ:
- 1) ա - 2, բ - 1, գ - 1, դ - 2
  - 2) ա - 1, բ - 2, գ - 2, դ - 2
  - 3) ա - 1, բ - 2, գ - 1, դ - 1
  - 4) ա - 2, բ - 2, գ - 1, դ - 2

**58**

**Ո՞ր բառի մեջ - գույն բաղադրիչը ածանց չէ.**

- 1) վեհագույն
- 2) վարդագույն
- 3) նորագույն
- 4) ազնվագույն

**ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միասնական քննության թեստի բոլոր 80 առաջադրանքներն ել կազմված են ճիշտ պատասխանի ընտրությամբ, այսինքն՝ տրված է չորս պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0 միավորով: Առաջադրանքը կատարված է համարվում, եթե քննություն հանձնողն ընտրում է ճիշտ պատասխանը:

Առաջադրանքների պահանջները հիմնականում ձևակերպվում են հարցի ձևով (դրական կամ ժխտական), ինչպես՝

**Գործառական ո՞ր ոճին է բնորոշ բաղաձայնութը.**

- 1) առօրյա-խոսակցական
- 2) հրապարակախոսական
- 3) գեղարվեստական
- 4) գիտական

Առանձին դեպքերում՝ հատկապես տեսական գիտելիքների ստուգման առաջադրանքներում, առաջարկվող պատասխանները շարունակում են պահանջի միտքը, ինչպես՝

**Դամենատության աստիճան ունենում են.**

- 1) հարաբերական ածականները
- 2) բաշխական թվականները
- 3) որակական ածականները
- 4) ցուցական դերանունները

Երկու դեպքում էլ պահպանվում է լուծման սկզբունքը. տրված հնարավոր չորս պատասխաններից պետք է ընտրել մեկը:

Առաջադրանքներում հարցեր կարող են տրվել առանձին միավորների (հնչյուն, բառ, նախադասություն, դարձույթ, ստեղծագործության վերնագիր և այլն), միավորների շարքի, ավելի ծավալուն միավորի կազմում եղած միավորի (հնչյունը բառի մեջ, ածանցը բառի մեջ, բառը նախադասության մեջ և այլն) վերաբերյալ:

Պահանջները հնարավորության սահմաններում ձևակերպվում են միակերպ՝ ուղղակի հարցման եղանակով, որը, կարծում ենք, քննություն հանձնողին ոչ միայն օգնում է արագ և ճիշտ ընկալելու պահանջը, այլև հնարավորություն է տալիս կենտրոնանալու հարցի և առաջարկվող պատասխանների բուն բովանդակության վրա:

Այս ուղեցույցում թեստի նմուշի բոլոր առաջադրանքները առանձին-առանձին հանգամանորեն չեն վերլուծվում: Լուծման եղանակների բացարության կարիք ունեն ընդամենը մի քանի

առաջադրանքներ, որոնք կամ իրենց բնույթով ու կառուցվածքով փոքր-ինչ տարբեր են մյուսներից, կամ յուրահատուկ են իրենց պահանջով կամ լուծնան եղանակներով:

Առաջադրանքներից մեկում տրվում են տարրերի (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, բացատրություններ և այլն) երկու շարքեր: Այդ շարքերում պետք է գտնել տարրերի՝ իրար համապատասխանող զույգերը: Այսպես՝ Ենթադրենք՝ ձախ կողմում տրված են գոռողների, իսկ աջ կողմում՝ ստեղծագործությունների անուններ:

**Ո՞ր գրողը ո՞ր ստեղծագործության հեղինակն է:**

- |                 |                      |
|-----------------|----------------------|
| ա. Յ. Թումանյան | 1. «Ռավեննայում»     |
| բ. Ա. Իսահակյան | 2. «Վահագն»          |
| գ. Ե. Չարենց    | 3. «Հայոց լեռներում» |
| դ. Վ. Տերյան    | 4. «Հրաժեշտի գագել»  |
- 1) ա - 2, բ - 4, գ - 3, դ - 1  
 2) ա - 4, բ - 1, գ - 2, դ - 3  
 3) ա - 3, բ - 2, գ - 1, դ - 4  
 4) ա - 3, բ - 1, գ - 2, դ - 4

Ձախ շարքի տարրերը, հնչաես տեսնում եք, նշված են տառերով, աջ շարքին՝ թվերով: Առաջադրանքը լուծելու համար նախ մտովի առանձնացրեք այն զույգը, որի ճիշտ լինելու մեջ համոզված եք: Ենթադրենք՝ գիտեք, որ «Ռավեննայում» բանաստեղծության հեղինակը Ավետիք Իսահակյանն է (արդեն պատրաստ է թ - 1 զույգը): Ապա, թեկուզ փոքր-ինչ կասկածելով, վերիշում եք «Հրաժեշտի գագել»-ի հեղինակի անունը՝ Վահան Տերյան: Ուրեմն գտնվեց նաև երրորդ զույգը՝ դ - 4: Բավկական է գտնել նաև երրորդ զույգը, ասենք՝ Յ. Թումանյան - «Հայոց լեռներում», և պարզ կդառնա նաև չորրորդ զույգը. «Վահագն» բանաստեղծության հեղինակը Ե. Չարենցն է: Ուրեմն նախնական տեսքով արդեն պատրաստ են բոլոր չորս զույգերը: Թեստ-գրքույկի մեջ՝ եթի ազատ մասում, նշեք (ցանկալի է՝ տառերի հերթականությամբ) որոշված զույգերը՝ ա - 3, բ - 1, գ - 2, դ - 4: Շարքերի ներքենում տրված են պատասխանի 4 տարրերակներ: Դրանցից գտնեք այն տարրերակը, որը համապատասխանում է ձեր գրաժին: Եթե չկա այդպիսի պատասխան, նշանակում է՝ որևէ զույգ սխալ եք ընտրել: Այդ դեպքում անհրաժեշտ է վերանայել զույգերի ընտրությունը:

Կարելի է առաջնորդվել նաև բացառնան եղանակով. բացառել այն տարրերակը կամ տարրերակները, որտեղ կա այնպիսի մի զույգ, որի սխալ լինելը ձեզ համար կասկածելի չէ: Ենթադրենք՝ այդ զույգը թ -

**Բ ՄԱԿԱՐԴԱԿ**

**51 Ո՞ր բառը ձայնավոր հնչյունով չի սկսվում.**

- 1) երես
- 2) օրինակ
- 3) ընկեր
- 4) էակ

**52 Ո՞ր շարքի թուղթ բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) նկարազարդել, գթառատ, մանր-մունր, լծակ
- 2) մրահոն, մրրկաբեր, առևտրական, անթացուա
- 3) տնական, կլանել, պարսկամետ, կատակերգակ
- 4) ջրկիր, տարեսկիզբ, Հովհաննիսյան, սակարան

**52 Համարակալված բառերում բաց թողած տառերը պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.**

Ես լսեցի, թե ինչպես ու...եկցորդուիին(1) քաղցրահնչ...ն(2) ձայնով հայտարարեց, որ մեր ինքնաթիռը պատրաստվում է վայր...ջը(3) կատարելու Սոֆ...այի(4) օդանավակայանում: Ես այդ վ...րկյանին(5) աշխարհի հետ էի, որն ունի վեց միլ...րդ(6) բնակչություն, օվկ...նոսներ(7) ու երկնամու...(8) լեռներ, անջր...ի(9) անապատներ ու ջրար...ի(10) մարգագետիններ:

- 1) 1 - դ, 2 - յու, 3 - է, 4 - յ, 5 - այ, 6 - իա, 7 - յա, 8 - դ, 9 - դ, 10 - փ
- 2) 1 - դդ, 2 - յու, 3 - ե, 4 - ի, 5 - այ, 6 - յա, 7 - իա, 8 - դ, 9 - տ, 10 - բ
- 3) 1 - դ, 2 - ու, 3 - է, 4 - յ, 5 - ա, 6 - իա, 7 - իա, 8 - իս, 9 - դ, 10 - փ
- 4) 1 - դ, 2 - յու, 3 - է, 4 - ի, 5 - այ, 6 - իա, 7 - իա, 8 - իս, 9 - դ, 10 - բ

**54 Ո՞ր շարքում բառերը այբբենական կարգով դասավորված չեն.**

- 1) թիթեղածածկ, թղթախաղ, թմրաբեր, թշնամական
- 2) իզուր, իլիկածե, իլիկաննան, ինքնուրույն
- 3) խելամիտ, խճուղամերձ, խմբերգ, խմբավար
- 4) ծիսարան, ծլարձակել, ծխամործ, ծծնբաթթու

**47**

Ո՞վ է միջնադարյան հայ սոցիալական քնարերգության սկզբնավորողն ու խոշոր ներկայացուցիչը.

- 1) Սայաթ-Նովա
- 2) Նահապետ Քուչակ
- 3) Ֆրիկ
- 4) Ներսես Շնորհալի

**48**

**Ակսել Բակունցի ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.**

«Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը: Սոնան էր՝ զառ մանդիներով նորահարսը՝ լույս ատամներով այն աղջիկը, որ այսպես զրնգուն ծիծաղուն էր...»:

- 1) «Այու սարի լանջին»
- 2) «Խոնարի աղջիկը»
- 3) «Ալպիական մանուշակ»
- 4) «Միրիավ»

**49**

**Ո՞ր ժամանակներում են տեղի ունենում Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի գործողությունները.**

- 1) 1918 – 1921 թվականներին
- 2) Տիգրան Մեծի թագավորության օրոք
- 3) Նոյի ժամանակներում
- 4) Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիններին

**50**

**Ո՞ր պոեմի գլխավոր հերոսն է Կոմիտասը.**

- 1) «Դեպի Սառը Մասիս»
- 2) «Բիբլիական»
- 3) «Դանթեական առասպել»
- 4) «Անլոելի զանգակատուն»

2-ն է, այսինքն՝ Ա. Իսահակյանը «Վահագն» բանաստեղծության հեղինակը չէ, ինտևաբար կարող եք միանգամից անտեսել պատասխանների երրորդ տարբերակը: Եթե վստահաբար գիտեք նաև, որ Յ. Թումանյանը «Ճրաժեշտի գագել»-ի հեղինակը չէ, իսկ Վ. Տերյանը՝ «Ռավեննայում»-ի, ապա կրացառվեն նաև 1-ին և 2-րդ տարբերակները, և կմնա 4-րդը՝ որպես ճիշտ պատասխան:

Ինչպես տեսաք, այս առաջադրանքի կատարման համար բավարում է զույգերից ընդամենը 3-ի ճիշտ իմացությունը. 4-րդը ստացվում է ինքնաբերաբար: Զննական թեստերում լինելու է նաև այս կարգի առաջադրանքների ավելի բարդ տեսակը, երբ շարքերից որևէ մեկուն (աջ կամ ձախ) տրվում է մեկ ավելորդ տարր: Ենթադրենք՝ մեր բերած օրինակի ձախ շարքում կա ևս մեկ գրողի անուն՝ Շովիաննես Շիրազ, որը նշված ստեղծագործություններից և ոչ մեկի հեղինակը չէ (կամ աջ շարքում նշված է ևս մեկ ստեղծագործության անուն, որը ձախ շարքի անուններից և ոչ մեկի հետ զույգ չի կազմում): Այս դեպքում ընտրությունը բարդանում է նրանով, որ դուք հստակ պետք է իմանաք բոլոր չորս զույգերը, կամ էլ, ընդհակառակը, հեշտանուն է, եթե վստահ եք, որ, այսպես կոչված, ավելորդ տարրը դիմացի շարքի տարրերից ոչ մեկի զույգը չէ: Այս դեպքում կարող եք տրված պատասխաններում միանգամից բացառել այն տարբերակը, որում կա ավելորդ տարրի համարը:

Ստորև տրված են մի քանի այլ տիպի առաջադրանքների նմուշներ՝ համառոտ բացատրություններով:

**1**

**Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն.**

- 1) **Մարտի** ամենաթեժ պահին ճայթեց կայծակը, և անձրև սկսվեց:
- 2) Այսօր մարտի ութն է՝ կանանց միջազգային օրը:
- 3) Իրենց ազատության համար **մարտի** էին ելել բոլորը:
- 4) Դայ ըմբիշը ութ օրում մասնակցեց ութ **մարտի** և նվաճեց առաջնության դափնին:

Այս առաջադրանքը նրա համար է, որ համանունները ճանաչվեն և իրարից տարբերակվեն խոսքաշրում՝ նախադասության մեջ: Նախադասություններից մեկուն գործածված է տվյալ համանուն բառերից առաջինը, իսկ մյուս երեքում՝ համանուն բառերից երկրորդը: Նախադասությունների իմաստային վերլուծությամբ պետք է որոշել, թե ո՞ր երեք նախադասություններում է գործածված միևնույն բառը՝ իր նույն կամ նման իմաստներով: Այդ դեպքում պարզ կդառնա, որ չորրորդ նախադասության մեջ ընդգծված բառը թեև ձևով համընկնում է մյուս երեքում ընդգծված բառերին, սակայն իմաստով միանգամայն տարբեր է, այսինքն՝ այլ բառ է, **համանուն** է մյուսներին:

Տվյալ դեպքում 2-րդ նախադասության մեջ ունենք մարտ (տարվա երրորդ ամիսը) բառը, իսկ մյուս երեքում՝ դրա համանունը՝ մարտ (կրիվ, գոտեմարտ) բառը: Դետևաբար ճիշտ պատասխանն է՝ 2:

**2** Փակագծում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարժի բոլոր պատասխաններն են ճիշտ.

ա. Սոնան թախիծով (1. թորովեց, 2. թորվեց) ուսը և արագ հեռացավ:

բ. Տնօրենը վատ էր (1. վերաբերում, 2. վերաբերվում) իր աշխատակիցներին:

գ. Փողոցով անցնում էր միջին տարիքի մի կից՝ գլխին (1. հովարով, 2. հովհարով) սահտակ գլխարկ:

դ. Փորձառու մարզիչը վերջին (1. ցուցումներն, 2. ցուցմունքներն) էր տալիս իր սաներին, թեև վերջիններս քաջածանոթ էին տեղանքին:

- 1) ա - 2, բ - 1, գ - 1, դ - 2
- 2) ա - 1, բ - 2, գ - 1, դ - 2
- 3) ա - 1, բ - 2, գ - 2, դ - 1
- 4) ա - 2, բ - 2, գ - 1, դ - 1

Այս առաջադրանքը նրա համար է, որ բառերը (հարանուններ, համանուններ, հոմանիշներ և այլն) ճանաչվեն և իրարից տարբերակվեն խոսքաշրությամբ նախադասության մեջ: Ամեն նախադասության մեջ երկու բառեր առնված են փակագծերի մեջ: Պետք է որոշել, թե ամեն նախադասության մեջ փակագծերում տրված բառերից որն է համապատասխանում տվյալ նախադասության իմաստին, իսկ որը՝ ոչ: Պատասխանի չորս տարբերակ է առաջարկված, որոնցում նշվում է, թե որ նախադասության դեպքում համարակալված բառերից որն է համապատասխանում այդ նախադասությանը: Արագ լուծելու համար կարելի է նախ ընդգծել ճիշտ պատասխանները, հետո դրանք համեմատել տրված տարբերակների հետ: ճիշտ պատասխանն է՝ 4:

**42** Ո՞վ է այս տողերի հեղինակը.

Ու թեև որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ, Բայց այս մատյանի հարակայությամբ կմնամ անմահ:

- 1) Ավետիք Իսահակյան
- 2) Գրիգոր Նարեկացի
- 3) Եղիշե Չարենց
- 4) Մովսես Խորենացի

**43** Նշվածներից ո՞րը պատմավեա չէ.

- 1) Ղերենիկ Ղեմիրճյան՝ «Վարդանանք»
- 2) Շահան Շահնուր՝ «Նահանջը առանց երգի»
- 3) Խաչատուր Աբովյան՝ «Վերք Յայաստանի»
- 4) Մուրացան՝ «Գևորգ Մարգարետունի»

**44** Դանիել Վարուժանի «Յեղին սիրտը» ժողովածուի համար ո՞ր բանաստեղծությունն է բնաբանի դեր կատարում.

- 1) «Զոն»
- 2) «Կուվի Երբ»
- 3) «Զարդ»
- 4) «Կարոտի նամակ»

**45** Ո՞վ է «Աշնան արև» վիպակի հեղինակը.

- 1) Ակմել Բակունց
- 2) Ավետիք Իսահակյան
- 3) Ալեքսանդր Շիրվանզադե
- 4) Յրանտ Մաթևոսյան

**46** Եղիշե Չարենցը ո՞ր հեղինակի ոճական նմանողությամբ է ստեղծել «Տաղարան»-ը.

- 1) Յովիաննես Թումանյան
- 2) Սայաթ-Նովա
- 3) Գրիգոր Նարեկացի
- 4) Նահապետ Քուչակ

**38**

Ո՞ր պնդումն է ճիշտ արևելահայերենի և արևմտահայերենի վերաբերյալ:

- 1) Մեկը գրական լեզու է, մյուսը՝ խոսակցական:
- 2) Մեկը գործածվում է, մյուսը՝ ոչ:
- 3) Երկուսն էլ մեկ գրական լեզվի տարրեր ճյուղեր են:
- 4) Մեկը բարբառ է, մյուսը՝ գրական լեզու:

**39**

Մուրացանի «Գևորգ Մարգարետումի» վեպում ո՞ւմ են ուղղված Սահակ Սևադայի խոսքերը.

«Ես չեմ կամենում, որ դու հայրենասիրությամբ գերազանցես ինձ».

- 1) Աշոտ Երկարին
- 2) Յովհաննես կաթողիկոսին
- 3) Գևորգ Մարգարետումուն
- 4) Ցլիկ Ամրամին

**40**

Ո՞ր ասույթի մեջ է խտացված Վարդանանց պատերազմի հիմնական գաղափարախոսությունը.

- 1) Լավ է աչքով կույր լինել, քան մտքով կույր:
- 2) Ուժն է ծնում իրավունք:
- 3) Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն:
- 4) Մի ծաղկով գարուն:

**41**

Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ.

1. Յագնեն ծիրանին արշալույսների
2. Գարնան թագավոր ինձ թագադրեն
3. Բարձրանամ կապույտ գահը լեռների
4. Արևն իբրև թագ ին գլխին առնեմ  
(Յ. Շիրազ)

- 1) 3, 1, 4, 2
- 2) 3, 4, 2, 1
- 3) 1, 2, 3, 4
- 4) 3, 4, 1, 2

**3**

Փակագծում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (տեղադրվելիք բառերը տրված են ուղիղ ձևերով).

Խոտն այստեղ չտեսնված համեղ էր, բուրավետ, բայց հանդապահը, ուր որ է ..... , պիտի ..... կարկանձ ..... վրա, թե ինչու են ապօրինի ..... ուրիշի խոտը:  
(1. արածել, 2. գոռալ, 3. հայտնվել, 4. նախրապան)

- 1) 1, 4, 3, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 3, 1, 2, 4
- 4) 4, 1, 2, 3

Սա համակցված առաջադրանք է, որ ստուգում է գիտելիքներ ու հմտություններ ձևաբանությունից, շարահյուսությունից և բառագիտությունից: Պահանջվում է որոշել, թե փակագծերում տրված բառերից որը նախադասության մեջ որ տեղում պետք է լինի, որպեսզի ստացվի ճիշտ նախադասություն: Բառերը տեղադրվելիս մեծ մասամբ ենթարկվում են ձևափոխությունների: Առաջադրանքն ուղղակիորեն չի պահանջում կատարել այդ ձևափոխությունները և ոչ էլ ստուգում է դրանց ճշտությունը: Բայց դրանք կատարել պետք է գոնե մտովի, այլապես հնարավոր չի լինի որոշել այս կամ այն բառի տեղը նախադասության մեջ: Իսկ ավելի հարմար է ձևափոխված բառերը գրել բացքողումների տեղում դրված կետերի փոխարեն, որպեսզի տեսանելի դառնա ճիշտ նախադասությունը: Վերջինս ամբողջացնելուց հետո կարելի է որոշել տեղադրված բառերի հերթականությունը, դա համեմատել լուծնան առաջարկված տարբերակների հետ և նշել ճիշտ պատասխանը:

Պետք է նախ տեղադրել այն բառերը, որոնց տեղը և ձևը ձեզ համար կասկածելի չեն, հետո փորձել գտնել այն բառերի տեղն ու ձևը, որոնք համարում եք կասկածելի: Այդ ընթացքում պետք է հասուլ ուշադրություն դարձնել նախադասության ինաստին, կառուցվածքին, կետադրությանը, շարահյուսական կապերին, համաձայնություն և հոլովառություն պահանջող բառերին:

Տրված նախադասությունը վերլուծելիս ակնհայտ է դաշնում, որ այսինք բառից հետո պետք է բայ լինի: Փակագծերում եղած երեք բայերից հատկապես գոռալ-ը կարող է այդտեղ լինել, քանի որ ամենից ավելի է հակված ունենալու վրա կապով խնդիր: Դավանական է, որ այդ բայի խնդիրը լինի տրված միակ գոյականը, թեև դերբայներ էլ կարող էլին լինել: Բայց քանի որ մնացած դեպքերում հնարավոր է միայն բայեր տեղադրել, ուստի գոյականի համար մնում է մեկ հավանական տեղ: Ուրեմն երրորդ բառն է՝ նախրապանների: Պիտի բառից առաջ եղած ստորակետը ենթադրել է տալիս դերբայական դարձվածի գոյություն: Ուրեմն առաջին բաց բոլոր բառը պետք է դերբայ լինի: Քանի որ մնացած

Երկու բառերից **հայտնվել** բայց չի կարող լինել չորրորդ տեղում (որտեղ միայն ներգործական բայ կարող է տեղադրվել), ուրեմն հենց այստեղ պետք է լինի: Խոսքաշարը հուշում է **հայտնվելով** ձևը: Վերջին բառը վերջին տեղում ունի **արածեցնում** ձևը, որ թելադրվում է նախադասության ընդհանուր տրամաբանությամբ:

Այսպիսով՝ ճիշտ պատասխանն է 2:

4

**Ո՞րն է այն բարդ բառը, որի վերջին բաղադրիչը հարկահավաք բարի առաջին արմատն է?**

- 1) բազմահարկ
- 2) եկամտահարկ
- 3) շահութահարկ
- 4) եռահարկ

Այս առաջադրանքը ստուգում է գիտելիքներ ու հմտություններ բառակազմությունից և հնչյունափոխությունից: Նախ պետք է գտնել առաջադրանքում և տարբերակներում տրված բառերի արմատները, մտովի վերականգնել դրանց անհնչյունափոխ ձևերը: Այնուհետև պետք է պատասխանների շարքում ճանաչել և բացառել ածանց պարունակող կամ պարզ բառերը: Պետք է գգուշանալ նաև համամունության դեպքերից: ճիշտ է այն պատասխանը, որը բարդ բառ է (առանց ածանցի), և որի վերջին բաղադրիչը նույն արմատն է, ինչ տրված բառի կազմում եղած առաջին արմատը: Տվյալ դեպքում ճիշտ պատասխանն է 2, քանի որ պատասխաններից երկուսում կա համանուն արմատ (բազմ+ա+հարկ, եռ+ա+հարկ), իսկ մեկում՝ ածանց (շահ+ութ+ա+հարկ):

5

**Համարակալված բառերում բաց թողած տառերը պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.**

Խոր...ուրորդ(1) ճանապարհը տանում էր մերթ սաղար...ախիտ(2) ու եր...ներանգ(3) անտառների կածա...երով(4), մերթ փա...թան(5) ու ջրար...ի(6) մարդագետիններով: Ու...տի(7) էր գնում Մարդարը իր կնոջ՝ Վիկտոր...այի(8) հետ ...ուրբ(9) Կարապետ եկեղեցի, որտեղ չեղել տասնի...ը(10) տարի:

- 1) 1 - դ, 2 - թ, 3 - փ, 4 - ն, 5 - ր, 6 - փ, 7 - խ, 8 - յ, 9 - ս, 10 - նն
- 2) 1 - թ, 2 - թ, 3 - փ, 4 - նն, 5 - ր, 6 - թ, 7 - դ, 8 - յ, 9 - ս, 10 - նն
- 3) 1 - դ, 2 - թ, 3 - փ, 4 - նն, 5 - ր, 6 - թ, 7 - խ, 8 - յ, 9 - ս, 10 - ն
- 4) 1 - դ, 2 - դ, 3 - թ, 4 - նն, 5 - ս, 6 - թ, 7 - խ, 8 - ի, 9 - ս, 10 - ն

35

**Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա.**

- 1) Սիրելին, քաղաքի ամենաշքեղ թաղամասում է իմ տունը. այնտեղ դու կապրես թագուհու նման:
- 2) Դա մի փաստաթուղթ էր, որ գրվել էր երկու հարյուր տարի առաջ՝ դեռևս պարսից իշխանության ժամանակ:
- 3) Ուշադրությունս գրավեց մի համեստ երիտասարդ, որ, մի կողմ քաշված, ականջ էր դնում գուսանի երգին:
- 4) Ասես, մարդը չէր, որ երգում էր այդ հորովելը, այլ՝ մայր բնությունը:

36

**Գործառական ո՞ր ոճին է բնորոշ հանգը.**

- 1) հրապարակախոսական
- 2) առօրյա-խոսակցական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական

37

**Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը.**

1. Նա ոչ միայն սովորեցնում, այլև դասագրքեր էր ստեղծում:
2. Տասնամյակներ ու հարյուրամյակներ շարունակ հայ Երեխաններն ու պատանիները թվաբանությունը սովորել են Շիրակացու խնդրագրքով:
3. Միջնադարյան հայ խոշորագույն գիտնականներից մեկն է Եղել Անանիա Շիրակացին, որ նշանավոր թվաբան էր, տոմարագետ, տիեզերագետ և ուսուցիչ:
4. Այստեղ անփոփված խնդիրները նաև հետաքրքիր տեղեկություններ էին պարունակում պատմությունից, աշխարհագրությունից, զանազան արհեստներից ու ժամանակին բնորոշ առօրյայից:

- 1) 1, 2, 4, 3
- 2) 3, 2, 1, 4
- 3) 3, 1, 2, 4
- 4) 2, 1, 3, 4

**32**

**Անուղղակի խոսքի ո՞ր փոխակերպումն է ճիշտ.**

Ես Տիգրանին ասել և հավատացրել եմ, որ մենք իրեն ամբողջ օրը փնտրել ենք:

- 1) Ես Տիգրանին ասել եմ.  
– Մենք քեզ ամբողջ օրը փնտրել ենք, – և հավատացրել եմ:
- 2) «Տիգրան, մենք, – ասել և հավատացրել եմ ես, – իրեն ամբողջ օրը փնտրել ենք»:
- 3) Ես Տիգրանին ասել և հավատացրել եմ.  
– Մենք նրան ամբողջ օրը փնտրել ենք:
- 4) – Մենք քեզ ամբողջ օրը փնտրել ենք, – ասել և հավատացրել եմ ես Տիգրանին:

**33**

**Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի.**

- 1) Մելամաղձոտ մի երգ էր տարածվում տպարանի արդեն քայքայված ու մթին առաստաղի տակ:
- 2) «Տեսնես հիմա ի՞նչ պիտի լինի», -խորհում էր Միքայելը:
- 3) Չայ նշանավոր վիպագիրներն են Ծերենցը, Ռաֆֆին, Մուլացանը, Դ. Ղեմիրճյանը, Ստ. Զորյանը:
- 4) Աշուն էր գովաշունչ, պայծառ:

**34**

**Ո՞ր նախադասության մեջ Հիշ առաջ ստորակետ չայիտի դրվի.**

- 1) Իջնում է գիշերն անգութ ու մթին Եվ այգը բացվում դառն ու մահահոտ...
- 2) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան Եվ այնքան ներում ո՞ր երկրի սրտում...
- 3) Ասպետը ծիուց վար թռավ և սաղավարտը ձեռքն առաջ ասպետին վայել հարգանքով համբուրեց նրա ձեռքը:
- 4) Չորս կողմը ծաղիկներ ու զմրուխտ դաշտեր և դրախտի բուրնունքն էր տարածվում գարնան քամու թևերով:

Այս առաջադրանքի նպատակն է բառերի ու բառաձևերի ուղղագրությունը ստուգել շարադրանքի մեջ: Դա հնարավորություն է տալիս առավել համակողմանի ընդգրկելու ուղղագրությունը: Ստուգվում են ուղղագրական միաժամանակ մի քանի կանոնների վերաբերյալ գիտելիքներ (տարրեր ձայնավորներ, բաղաձայններ, երկինչուններ, մեծատառեր և այլն), ինչպես նաև հարանունների (հնչյուն-հնչուն, կտրիճ-կտրիչ, վարգ-վարք, մրմռալ-մռմռալ և այլն), համահունչ համանունների (ուղտ-ուխտ, աղտ-ախտ, որթ-որդ, Ասիա-Ասյա և այլն) ուղղագրության հմացությունը:

Ճիշտ և արագ լուծելու համար կարող եք թեստ-գրքույկի մեջ նախ լրացնել բաց թողած տառերը, այնուհետև ստուգել, թե պատասխանի որ տարրերակին է համապատասխանում ձեր գտած լուծումը: Եթե ոչ մեկին չհամապատասխանեց, ուրեմն ձեր լուծումը հաստատապես սխալ է, և պետք է վերանայել: Եթե դրանից հետո ել չեք գտնում ճիշտ լուծումը, ապա ընտրեք ձեր լուծնանը առավել մոտ պատասխանը:

Տվյալ հեպքում ճիշտ պատասխանն է՝ 3:

**Տեքստի** վերաբերյալ առաջադրանքներից մեկում տրվում է համառոտ շարադրանք, և ներկայացվող հնարավոր պատասխան-դատողությունների մեջ պահանջվում է գտնել այն նախադասությունը, որն իր բովանդակած մտքով հակասում է (կամ, հակառակ, չի հակասում) այդ տեքստի ընդհանուր բովանդակությանը կամ դրանում արտահայտված մտքերից որևէ մեկին: Ճիշտ պատասխանը գտնելու հարցում ձեզ կօգնեն հետևյալ հուշումները:

- **միայն, հատկապես, ամբողջությամբ, բացի, բացառապես, առավելապես, սովորաբար, հաճախ, երբեմն, հազվադեպ և նման բառեր պարունակող դատողությունները կարող են տեքստի բովանդակության հետ հակասության մեջ լինել՝ այդ բառերի սահմանափակող կամ գնահատողական նշանակություն ունենալու պատճառով,**
- պատասխանի տարրերակում բերված դատողության ձևակերպման **Ժխտական ձևը** կիակասի տեքստի՝ հաստատականով ձևավորված նույն մտքին, և հակառակը,
- դատողությանը հակասելը կարող է պայմանավորված լինել նրանում արտահայտված մտքերի պատճառահետևանքային, պայմանահետևանքային, իմաստային այլ կապերի խախտմանը կամ տեքստում այդ մտքերի միջև նման կապի բացակայությամբ,
- դատողությունը կարող է հակասել տեքստին, եթե նրանում ոչ ճիշտ է արտահայտված տեքստում նկարագրվող դեպքերի կամ գործողությունների ժամանակային հաջորդականությունը,
- տեքստում արտահայտված մտքերին կարող է հակասել նաև այն, որ մասնավորը ներկայացվում է ընդհանուրի փոխարեն, և հակառակը:

**Բերենք այդայիսի առաջադրանքի մեկ օրինակ.**

**6** Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը.

Գրաբարը հունարենից փոխառություններ է կատարել 3-4-րդ դարերից մինչև 10-11-րդ դարերը: Հունարենի ազդեցությունը հայերենի վրա հիմնականում եղել է գրական-գրքային ճանապարհով, գիտության, գրականության և եկեղեցու միջոցով: Հունարենից գրաբարի փոխառած ավելի քան 900 բառերը գլխավորապես գիտական, մշակութային, եկեղեցական-կրոնական բնույթի են, ինչպես՝ ամֆիթատրոն, եկեղեցի, երգեհոն, քարտեզ, թատրոն, կամար, կիթառ, մեռոն, մատուռ, աղամանդ և այլն, որոնցից ժամանակակից հայերենում գործածական է շուրջ 130 բառ, այսինքն՝ մոտ 14 տոկոսը:

- 1) Հայերենը հունարենից բառեր է փոխառել գերազանցապես գրաբարյան շրջանում:
- 2) Հայերենի գիտական, մշակութային, եկեղեցական-կրոնական բառապաշարում որոշ թիվ են կազմում հունարենից փոխառած բառերը:
- 3) Հայերենը հունարենից բառեր է փոխառել գլխավորապես բանավոր ճանապարհով:
- 4) Հունարեն փոխառությունների մի մասը ժամանակակից հայերենում գործածական չէ:

Ակնհայտ է, որ առաջին, երկրորդ և չորրորդ մտքերը ուղղակիորեն բխում են տեքստից կամ նրա այս կամ այն հատվածից, իսկ երրորդը ոչ միայն տեքստում չկա, այլև հակասում է նրա բովանդակությանը:

Որոշ առաջադրանքներ կազմված են այնպես, որ առաջարկվող նյութը (բառեր, բառակապակցություններ, նախադասության անդամներ, դատողություններ և այլն՝ համարակալված տառերով) կարող է պարունակել առաջադրանքի պահանջին համապատասխանող մեկից ավելի ճիշտ պատասխաններ: Հարցը սովորաբար ձևակերպվում է այսպես. **Ընդգծվածներից (Բերված հատվածներից) քանիսո՞ւմ կա (չկա) այսինչ երևոյթը:** Պատասխանների տարրերակներում նշվում են թվեր՝ 1) մեկում, 2) երկուսում, 3) երեքում, 4) ոչ մեկում (կամ բոլորում): Դուք պետք է կարողանաք գտնել տրված նյութի համապատասխանությունը (կամ անհամապատասխանությունը) պահանջին և ընտրել այն տարրերակը, որում նշված քանակը համապատասխանում է ձեր ընտրած ճիշտ պատասխանների թվին:

Բերենք մեկ օրինակ.

**28** Ո՞ր նախադասությունն է կրավորական կառուցվածքի.

- 1) Գիշերվա անակնկալ դեպքից ցնցվել էր Նոր Զուղան:
- 2) Հակոբը բաժանվել էր իր ծնողներից:
- 3) Նա հաջողությամբ թաքնվեց իրեն հետապնդողներից:
- 4) Մասրենին կախված է ժայռի եզրից:

**29** Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա.

- 1) Կավիճը մահացած ծովային մանրագույն կենդանիների խեցիների բազմություն է:
- 2) «Բարոն Մյունխաուզենի արկածները» գրվել է գերմանացի գրող Ռասապեկի կողմից:
- 3) Բերիվենի «Պարետիկ» սոնատի երաժշտության մեջ կա խոր զգացմունք և բուռն պոռթկումներ:
- 4) Չարենցին՝ որպես տաղանդավոր բանաստեղծի, բոլորն են ճանաչում:

**30** Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա.

- 1) Ուսուցիչը հաճախ էր կատակում աշակերտների հետ:
- 2) Իր այդ անմիտ արարքով նա նսեմացավ ներկաների առջև:
- 3) Մենք վաղուց վարժվել ենք կենցաղային դժվարություններին:
- 4) Խժդիությունների նպատակն էր ամեն կերպ թուլացնել իշխանությանը:

**31** Ո՞ր բառը պետք է տեղադրել բաց թողած տեղում՝ ճիշտ նախադասություն ստանալու համար.

Հանդիպակաց սարերից մեղմորեն փչում էր սյուլքը, ..... ջրաղացի նոտի հնօրյա թիւկիներն ու կաղամախիները մեղմօրոր խշշում էին:

- 1) որով
- 2) երբ
- 3) քանի որ
- 4) իսկ

**22 Ինչ դերանվան ո՞ր ձևն է սխալ.**

- 1) **Ինչ** հրաշալի տեսարան է բացվում այս բարձունքից:
- 2) ճշտեք՝ **ինչումն** է բանը, որ այսքան ձգձգում են մեր գործը:
- 3) **Ինչ** կլինի, որ դուք էլ մի քիչ օգնեք նրան:
- 4) Եվ այն, **ինչ** ասելն իսկ ահավոր է, գրում եմ այստեղ:

**23 Ո՞ր շարքի բոլոր բայերն են պատկանում –ա խոնարհման.**

- 1) բնակեցնել, ճշում է, չի մռնչա
- 2) որսում էինք, չի ցոլում, խայթող
- 3) աղացեք, կաղում էր, քնած
- 4) ողբում եմ, հոգացինք, հասունացած

**24 Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ չկա.**

- 1) Մենք կարդալու ենք այդ գիրքը:
- 2) Այդ մասին հանգամանորեն խոսվելու է:
- 3) Այդ ջուրը խմելու չէ:
- 4) Երեխաները այդ երգը չեն երգելու:

**25 Ո՞ր շարքի բոլոր բայերն են անցյալ ժամանակով.**

- 1) մի գնացեք, գնացել էինք, գնացեք
- 2) գնայինք, կգնայինք, պիտի գնանք
- 3) չգնայինք, գնացել է, գնայի
- 4) չեք գնացել, չգնան, չպիտի գնայինք

**26 Դառնայ բայի խոնարհման ո՞ր ձևն է սխալ (ոչ գրական).**

- 1) դարձեք
- 2) կդառնաք
- 3) դառավ
- 4) դարձաք

**27 Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն).**

- 1) Մենք **ծիգ բափելով** մագլցեցինք լեռան գագաթը:
- 2) Դու մրամ տեսնելով շատ կուրախանաս:
- 3) Արամը **ծեռքս բռնած** ժպտում էր:
- 4) Տղան բակ իջավ ֆուտրով խաղալու:

**7**

**Գրիգոր Նարեկացու տաղերի վերաբերյալ հետևյալ պնդումներից քանի սն ճիշտ.**

1. Նարեկացին իր տաղերով վիթխարի առաջընթաց է կատարել՝ հայ բանաստեղծությունը մոտեցնելով իրական կյանքին:
2. Նարեկացու տաղերից մեկում քրիստոնյան տեսնում ենք գոհար վարդի և ճերմակ շուշանի պատկերով:
3. Նարեկացին առաջին անգամ հայ քնարերգության մեջ պատկերել ու գովերգել է բնությունը:
4. Լինելով միստիկ բանաստեղծ՝ Նարեկացին առանց այլաբանության գովերգել է իրական կյանքը:

  - 1) մեկը
  - 2) երկուսը
  - 3) երեքը
  - 4) բոլորը

Գրիգոր Նարեկացու տաղերի վերաբերյալ այս դատողություններից երեքը ճիշտ են, սխալ է մեկը. Նարեկացին իրական կյանքի պատկերներ չի ստեղծել. այլաբանությամբ կերտել է գեղեցիկ բնանկարներ՝ հայ քնարերգության մեջ սկզբնավորելով կենդանի բնության երգը: ճիշտ պատասխանն է՝ 3:

Առաջադրանքի այս տեսակը բարդության աստիճանով գերազանցում է սովորական՝ ընտրովի պատասխաններով առաջադրանքներին այն առումով, որ եթե վերջիններում առկա է ընդամենը մեկ ճիշտ պատասխան (երեք սխալ պատասխաններ), որին կարելի է հանգել՝ պարզապես մեկը ճանաչելով կամ մյուսները բացառելով, ապա այս դեպքում կողմնորոշումը պահանջում է համապատասխան նյութի համակողմանի, ամբողջական իմացություն:

Այս կարգի առաջադրանքների քանակը քննական թեստի Ա մակարդակում չպետք է գերազանցի 2-ը, Բ մակարդակում՝ 3-ը:

Առաջադրանքներ կազմելիս հեղինակային խումբն աշխատել է ըստ հնարավորին հարազատ մնալ դասագրքային ձևակերպումներին:

## ԹԵՍՏ 1

## Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում **Ռ**.

- 1) ակ–նդետ, մթ–նկա, հատ–նտիր, վեր–նթաց
- 2) համ–նկնել, ան–նտել, գործ–նկեր, առ–նչվել
- 3) առ–նթեր, հյուր–նկալ, ճեպ–նթաց, նոր–նծա
- 4) գիրկ–նդիսառն, մակ–նթացություն, անակ–նկալ, խոչ–նդոտ

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում **Ր**.

- 1) նր–ակազմ, շամ–ուտ, վիրա–, շեղ–
- 2) անխա–, գա–րիել, գրա–ար, ջրար–ի
- 3) անխա–ան, ող–աձայն, հուսախա–, բոր–
- 4) Համ–արձումյան, դա–նեպսակ, ող–երգակ, հար–ել

3 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում **ԵՎ**.

- 1) գին–աճառ, հոգ–իճակ, ագ–ազ, ուղ–որ
- 2) ալ–որ, ալ–արս, ոսկ–ազ, հ–ասպառ
- 3) կար–եր, ուղ–ճար, համա–րոպական, դափն–արդ
- 4) վազ–ազ, գեր–արել, հոգ–որդի, տար–երջ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում **Ի**.

- 1) նշխար–, աշխար–ահօչակ, ապաշնոր–, խոր–րդակցել
- 2) խոր–ին, ընդ–ատել, ժպիր–, օր–ներգ
- 3) հայ–ոյել, հեղ–եղուկ, նիր–ել, խոնար–վել
- 4) ապաշխար–ել, պատե–ապաշտ, հով–անոց, խոտ–արք

5 Ո՞ր բառում է գաղտնավանկի **Շ**-ն սխալ տեղադրված.

- 1) ձեռն՛ըաց
- 2) տ՛ղտմել
- 3) հայտն՛վել
- 4) գ՛ղտն՛վել

## 17 Ո՞ր բառը կազմությամբ բարդ ածանցավոր չէ.

- 1) հնգամյա
- 2) արյունաբու
- 3) չվացուցակ
- 4) դյուրագրիոն

## 18 Ընդգծված բառը տվյալ նախադասության մեջ որպես ի՞նչ խոսքի մաս է հանդիս եկել.

**Դայերեն** տառերը ստեղծվել են հինգերորդ դարում:

- 1) մակրայ
- 2) գոյական
- 3) ածական
- 4) վերաբերական

## 19 Ո՞ր գոյականի հոգնակին է նշանակում նյութի տարրեր տեսակներ.

- 1) շերտեր
- 2) խոսքեր
- 3) մարմարներ
- 4) վարդաններ

## 20 Ընդգծված հոլովածերից որի՞ կիրառությունը ոճական առունուվ հանձնարարելի չէ.

- 1) ...Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին,  
*Դույսի՝* հայրենիք,  
*Լույսի՝* հայրենիք:
- 2) *Ազո* արարողությունը կարծ տևեց:
- 3) *Դուսո* մի վերջին շող լուսավորեց Մարկոս Ալիմյանի դեմքը:
- 4) Ամուսնու մահից հետո նա երկար ժամանակ *սզո* մեջ էր:

## 21 Համեմատության աստիճան ունենում են.

- 1) հարաբերական ածականները
- 2) բաշխական թվականները
- 3) որակական ածականները
- 4) ցուցական դերանունները

**13** Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- Այդ դեպքից հետո նրա հոգում մի տեսակ դառնության (1. զգացմունք, 2. զգացում) էր մնացել:
  - Նրան (1. հազվադեպ, 2. հազվագյուտ) կարելի էր տեսնել պարապ զբոսնելիս:
  - (1. Տեղային, 2. Տեղական) իշխանությունները դաժան հաշվեհարդար տեսան ցուցարարների հետ:
  - Բժիշկները հիվանդին ուշադիր (1. քննարկեցին, 2. քննեցին) և ախտորոշեցին թոքերի բորբոքում:
  - Անհնարին (1. խոռվթի, 2. խոռվության) մեջ կանգնած էր նա հայրենական տան մուտքի առաջ:
- ա - 1, բ - 1, գ - 2, դ - 2, ե - 1
  - ա - 2, բ - 1, գ - 2, դ - 2, ե - 1
  - ա - 1, բ - 2, գ - 2, դ - 1, ե - 2
  - ա - 2, բ - 1, գ - 1, դ - 1, ե - 2

**14** Ո՞ր բառն է ավերակ բառին հականիշ.

- համալիր
- շեն
- բարետես
- աներեր

**15** Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ.

- հատընտիր, ադամորդի, ադեխարշ
- գարեջուր, պարընկեր, հայազգի
- ազգընտիր, բազկաթոռ, փոշեհատիկ
- սերմնագրավ, արքայազն, կարճալիք

**16** Ո՞ր բառի արմատը ինքնուրույն չի գործածվում.

- համեղանալ
- ուղևոր
- ճեմարան
- սեղմակ

**6** Ո՞ր շարքի բոլոր դեպքերում են բաղադրիչները միասին գովում.

- վայր(ընթաց), մեն(մենակ), մեկ(մեկու), քաջ(արի)
- հինգ(հարյուր), երկրե(երկիր), մայր(իշխանություն), բուժ(սպասարկում)
- առ(այժմ), առ(հավետ), առ(կախ), առ(միշտ)
- ի(սպառ), ի(հարկե), ի(զուր), ի(նշան)

**7** Ո՞ր շարքի բառերի և բառակապակցությունների բոլոր բաղադրիչներն են մեծատարով գովում.

- ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱԿՐՈՍ, ՆՈՐ ԳԵՏԻԿԱՎԱՆՔ, ՍԱՐԱԿ ՍԵՎԱԿԱ
- ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱ, ԾԱՐԿՈՒՆՅԱՑ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՆԱՐ-ԴՈՍ, ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵԽՄԱՐԱՎ
- ԾԱԽՄԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՖԵՇԵՐԱՑԻԱ, ՄԽԻԹԱՎ ԳՈՇ, ԵՐԿԱՆ ՍԱԿԱՎԱԿՅԱՑ, ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
- ՓՈՔՐ ԱՍԻԱ, «ՔԱԶ ՆԱԶԱՐ», ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

**8** Ընդգծված բառերից քանիսո՞ւմ հնչյունափոխություն կա.

Երբ քունդ գա, լուռ գիշերով  
Հոգիդ գրկեմ, համբույր տամ,  
**Արտիդ կաչեմ վառ կարոտով,**  
Լամ ու **խնդամ**, մայրիկ ջան...

(Ա. Իսահակյան)

- բոլորում
- երկուսում
- երեքում
- չորսում

**9** Ո՞ր բառում վերջին վանկը շեշտված չէ.

- լուսնկա
- կարգադրել
- գիշանգղ
- երջանկություն

**10 Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա.**

- 1) Թոշունների երամը ուրախ ծլվլոցով ճախրում էր երկնականարում:
- 2) Եկող տարվա մեր ամելիքները եկեք միասնաբար ծրագրենք:
- 3) Այդ նիստում քննարկվելու էին օրակարգի վերջին երկու հարցերը:
- 4) Տեսնելով ընկերների մռայլ կերպարները՝ Սուրենն ամբողջ մարմնով սարսաց:

**11 Ընդգծված բառերից ո՞րը փոխաբերական իմաստով գործածված չէ.**

- 1) Յոգիս **արթացավ** հարավի բույրից, ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա:
- 2) Ո՞վ է **բնակվում** մեր իին հարկի տակ, Ո՞վ է խնկահոտ մեր դուռը բացում:
- 3) Օրոր էր ասում աշունն անտառին, Բայց դեռ անտառի **քունը չէր տանում**:
- 4) Միամիտ չեմ՝ հավատամ քեզ, Տառապանքս **փորձ ունի...**

**12 Աչքին երևալ դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ.**

- 1) Ակատվել
- 2) ուշադրություն գրավել
- 3) թվալ
- 4) շատ սիրելի դառնալ

**13 Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ.**

- 1) իրապուրել, փափագել, թովել, ոյութել
- 2) առույգ, աշխույժ, մոլեգին, եռանդուն
- 3) հողմ, մրրիկ, փոթորիկ, քամի
- 4) գիտակ, իրազեկ, բանինաց, իմաստակ

**9 Ո՞ր բառում փակ վանկ չկա.**

- 1) ճարճատյուն
- 2) խաբերա
- 3) հարկատու
- 4) կաթսա

**10 Ո՞րը տարագիր բառի հոմանիշը չէ.**

- 1) աստանդական
- 2) թափառական
- 3) պանդուխտ
- 4) ասպնջական

**11 Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ չկա.**

- 1) Ծանր նստել է քարափը ձորում...
- 2) Իմ մեջ այրվում է մի անհագ կարոտ...
- 3) Կածանները ճշում են այնտեղ, Զրվեժները լռում են...
- 4) Ցորենի կանաչ արտի մեջ Առվույտի կապույտ մի ծաղիկ...

**12 Նշված բառակապակցություններից ո՞րը դարձվածքային իմաստ չունի.**

- 1) տունը քանդել
- 2) սուրը պատյանը դնել
- 3) ծաղիկ վաճառել
- 4) բերանը ջուր առնել

- 6** Ո՞ր շարքի բոլոր բառերն են անջատ բաղադրիչներով գրվում.
- 1) այսօր (վաղը), մուգ (կարմիր), ի (ծնե), ձեռք (բերում)
  - 2) անուն (ազգանուն), ի (գիտություն), հարյուր (քսան), հարավ (արևելք)
  - 3) ծառից (ծառ), իին (հունական), քաջ (առողջություն), մեջ (ընկնել)
  - 4) տեր (հայր), ըստ (կարգի), հավիտյան (հավիտենից), մի (երկու)
- 7** Ո՞ր նախադասության մեջ մեծատառի գործածության սխալ կա.
- 1) Յրագդանի ձախ ափին է Կոմիտասի անվան այգին... Այստեղ հավիտենական քնով ննջում են Կոմիտասը, ճարտարապետ Թորոս Թորամանյանը, հայ բեմի վարպետներ Յրացյա Ներսիսյանը, Վահրամ Փափազյանը և շատ ուրիշներ:
  - 2) Փոքրիկ Վարդիկը գրախանութից գնեց Գրիմ Եղբայրների հեքիաթների ժողովածուն, Մուշեղ Իշխանի հատընտիրը և ժողեք Ռոնի Ավագի «Քարանձավային առյուծը»:
  - 3) -Քանի՞ անգամ եմ ծեզ ասել՝ մի՛ աղմկեք,- հանդիմանեց տիկին Յասմիկը ուսանողներին, ապա, դառնալով զրուցակցին, ասաց.- Ես Չեզ խնդրում եմ սպասել մինչև դասի ավարտը, որից հետո ես և Դուք կպարզենք բոլոր հարցերը:
  - 4) Յայտնի է, որ Պորտուգալացի ծովագնաց Մագելանի արշավախումբը 16-րդ դարում Եվրոպայից մեկնեց արևմուտք, կտրեց Խաղաղ օվկիանոսը, և իին նավերից միայն մեկը, շրջանցելով Ասեղի հրվանդանը, վերադարձ տուն:
- 8** Ո՞ր բառում ձայնավորի հնչյունափոխություն կա.
- 1) կուսական
  - 2) փոստարկել
  - 3) կատվառյուծ
  - 4) ուխտադրուժ
- 14** Ո՞ր շարքի բառագույգերն են հականիշներ.
- 1) ճիշտ-թյուր, մակերեսային-ծանծաղ
  - 2) կիրք-անտաշ, բերկրալից-թախծոտ
  - 3) պատվարժան-անարգ, նոր-վերջին
  - 4) կանուխ-վաղ, խորդուբորդ-ողորկ
- 15** Ո՞ր շարքի բառերն են կազմությամբ պարզ.
- 1) ոհմակ, քարայր
  - 2) սնոտի, ցնորք
  - 3) մարգարե, նոնակ
  - 4) աղամանդ, կարպետ
- 16** Ո՞ր բառում չկա -ակի վերջածանցը.
- 1) թեթևակիորեն
  - 2) բազմակիություն
  - 3) յոթնակի
  - 4) կիրակի
- 17** Ո՞ր բառը հապավում չէ.
- 1) ուսմասվար
  - 2) աշխաղեկ
  - 3) ժողովրծիքներ
  - 4) ջրհոր
- 18** Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյական.
- 1) վերամբարձ, ողբերգակ, ճարմանդ
  - 2) վարզ, հանգրվան, դրնեդուռ
  - 3) հանդիպում, ցայգերգ, ուղերձ
  - 4) քղանցք, օթևան, շքեղազարդ
- 19** Ո՞ր շարքում հոգմակիի կազմության սխալ կա.
- 1) հատակագծեր, պատմագիրներ, վերջակետներ
  - 2) խաղաթղթեր, հողաթմբեր, մեղվաբույծներ
  - 3) ուղեգրեր, սպիներ, նստացույցեր
  - 4) ժամացույցներ, պարտավորագրեր, ոճաբաններ

**20 Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում –ի հոլովման.**

- 1) վերարկու, գործարանատեր, տանտիկին
- 2) ածխաթթու, ծիրան, իմաստուն
- 3) վիրակապ, նախամարդ, արքա
- 4) երեկո, ծաղրել, լուսաբաց

**21 Ո՞ր նախադասության մեջ թվականի կազմության սխալ կա.**

- 1) Մեզանից երեքը մեկնեցին գյուղ, մյուսները մնացին քաղաքում:
- 2) Ընտրվեցին իինգ մարզիկներ՝ հետագա մրցումներին մասնակցելու համար:
- 3) Աշակերտներին բաժանեցին երկուական տետր:
- 4) Նա այդ առարկայից առաջի անգամ է հինգ ստանում:

**22 Ո՞ր նախադասության մեջ չկա դերանունով արտահայտված ենթակա.**

- 1) Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով...
- 2) Իմ հոգում մեռավ սիրո մի երկինք, մի վառ արեգակ, և սեր, և հավատ:
- 3) Դու պիտի հնչե՞ս, հնչես հաղթակա՞ն, իմ իի՞ն հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբո՞ւխ:
- 4) Զանք է անում ամեն մինը՝ Շուտով տանի, տիրանա...

**23 Նշված կիրառություններում ընդգծվածներից քանի՞սն են ներգործական սերի բայ.**

1. *Մի՛ ալեկոծիր* բքահարվածիս, ել մի՛ սասանիր, երբ ցնցված եմ ես...
2. Ես *սիրում եմ քեզ*, իմ հայ՝ ժողովուրդ...
3. Կախարդական մի շղթա *կա երկնքում՝ Աներևույթ*, որպես ցավը խոր հոգու...
4. Բայց խալսի ամսիրտ քեֆերին ես տիսուր, մենակ *մնացի...*

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

**ԹԵՍՏ 2****Ա ՄԱԿԱՐԴԱԿ****1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում օ.**

- 1) բար-րություն, թիկն-թոց, ոսկեզ-ծ, ան-րսալի
- 2) հանր-գուտ, աման-րյա, հնգ-րյակ, հանապազ-րյա
- 3) մեղն-րոր, սալոր-ղի, ականջ-ղ, նախ-րե
- 4) տափ-ղակ, չար-րակ, տրտմ-րոր, խաղող-րինեք

**2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ղ.**

- 1) բա-ձալի, խե-ղել, բո-կ, տա-տակ
- 2) ղժո-ք, հ-կել, սե-մել, հա-թել
- 3) ա-քատ, փե-կ, մա-թել, սանդու-ք
- 4) ո-կույզ, գա-ջ, գա-թօջախ, հա-ճապակի

**3 Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում յ.**

- 1) խաբերա-ություն, ժողովածու-ում, երեկո-ի, նա-իրի
- 2) վա-ելել, երեխա-ի, զնե-ի, պահածո-ի
- 3) ատամնաբու-ծ, նա-իր, թե-ել, Միքա-ել
- 4) եղ-ամ, Յոհիվսիմե-ի, լոել-այն, հա-ելի

**4 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում կրկնակ բաղաձայն.**

- 1) հո-երգություն, ու-աթիո, խորագ-ին, տա-որոշել
- 2) հե-են, կե-ե, բե-ի, այ-ենարան
- 3) ու-ամիտ, ըն-իմադիր, երե-րիչ, հո-ասուն
- 4) ի-երորդ, մ-կածուփ, տա-երային, ու-եգիր

**5 Ո՞ր բառում է թափ գրված ո-ն արտասանվում վ/ո.**

- 1) բարձրորակ
- 2) արջառու
- 3) չափորոշիչ
- 4) անողորմ

## Թեստ 1-ի պատասխանները

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

|    |   |
|----|---|
| 1  | 3 |
| 2  | 2 |
| 3  | 3 |
| 4  | 3 |
| 5  | 1 |
| 6  | 3 |
| 7  | 4 |
| 8  | 4 |
| 9  | 3 |
| 10 | 4 |
| 11 | 2 |
| 12 | 4 |
| 13 | 3 |
| 14 | 2 |
| 15 | 4 |
| 16 | 4 |
| 17 | 4 |
| 18 | 3 |
| 19 | 1 |
| 20 | 2 |
| 21 | 4 |
| 22 | 2 |
| 23 | 2 |
| 24 | 2 |
| 25 | 1 |

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

|    |   |
|----|---|
| 26 | 2 |
| 27 | 1 |
| 28 | 4 |
| 29 | 2 |
| 30 | 4 |
| 31 | 4 |
| 32 | 2 |
| 33 | 3 |
| 34 | 1 |
| 35 | 2 |
| 36 | 3 |
| 37 | 1 |
| 38 | 4 |
| 39 | 2 |
| 40 | 4 |
| 41 | 1 |
| 42 | 4 |
| 43 | 2 |
| 44 | 1 |
| 45 | 1 |
| 46 | 4 |
| 47 | 4 |
| 48 | 3 |
| 49 | 2 |
| 50 | 4 |
| 51 | 2 |
| 52 | 4 |
| 53 | 3 |
| 54 | 3 |
| 55 | 2 |
| 56 | 2 |
| 57 | 2 |
| 58 | 1 |
| 59 | 2 |
| 60 | 2 |
| 61 | 3 |
| 62 | 3 |
| 63 | 4 |
| 64 | 2 |
| 65 | 4 |
| 66 | 1 |
| 67 | 3 |
| 68 | 1 |
| 69 | 4 |
| 70 | 3 |
| 71 | 2 |
| 72 | 4 |
| 73 | 2 |
| 74 | 3 |
| 75 | 3 |
| 76 | 4 |
| 77 | 4 |
| 78 | 4 |
| 79 | 4 |
| 80 | 2 |

24

Ո՞ր նախադասության մեջ բայի ըղձական եղանակի ժամանակածն չկա.

- Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարդերս, Անուշ բույր տար, վարդի գույն տար երգերիս:
- Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ, Արքայական խոսքը մեր կմնա հավետ:
- Սեգ ժայռերի վայրի, խոշոր բարձունքին վարդեր քաղեմ ու ճակատս պսակեմ:
- Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի, Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան...

25

Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը վաղակատար ծևաբայ չէ.

- Նա սիրում է **երգել**:
- Ես արդեն **ավարտել** եմ դպրոցը:
- Այդ հարցին ոչ ոք դեռ չի **անդրադարձել**:
- Պիտի ասեմ, որ շատերը այդ մասին չեն **լսել**:

26

Ընդգծվածներից ո՞րը վերաբերական չէ.

- Այդ խոսքերը, **հարկավ**, ես կիշեմ:
- Ճաջորդ օրը մենք **նույնպես** մեկնեցինք քաղաքից դուրս:
- Թերևս** ըլլա գեղանի, թե որ սիրեմ, չմեռնի...
- Գուցե** ժպտաս քո խոսքերով արծաթե...

27

Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը բացահայտիչ.

- Որպես** տաղանդավոր **մկանակարի**՝ գրիգոր Գրիգորյանին շատ երկրներում են ճանաչում:
- Նա շատերին էր ներկայացրել իր՝ բնագիտության **ծեռնարկը**:
- Ներս մտավ մի երիտասարդ կին՝ աչքերի տարօրինակ **փայլով**, կտրուկ շարժումներով:
- Ոչ մեկին չեն հետաքրքրում նրա զգացմունքները, գեղեցիկ ապագայի **հոլյսերը**:

**28** Ո՞ր հոլովածներ կամ կապային կառույցը պետք է տեղադրել նախադասության մեջ.

ճամփորդը նստել էր մի քարի վրա և լայնասաղարթ ծառի . . . չէր զգում ամառվա տապը:

- 1) ստվերների մեջ
- 2) ստվերից
- 3) ստվերով
- 4) ստվերուն

**29** Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա.

- 1) Լեռան լանջերին և ստորոտում սաղարթախիտ անտառներ են տարածվում, որոնք ընդմիջվում են ծաղկազարդ մարգագետիններով:
- 2) Սիրելի հովանավոր, մենք շատ երախտապարտ ենք Ձեզնից:
- 3) Մեր առաջ փուված էր ձյունով ծածկված անծայրածիր տափաստանը:
- 4) Ոչ մի ոտնահետք չէր մնացել վաղնջական կուսականությունը պահպանած անտառի արահետներին:

**30** Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ կա.

- 1) Շինարարներն աներկբա հայտարարեցին, որ ցանկություն ունեն համագործակցելու մեջ հետ միայն:
- 2) Մյուս բոլոր դեպքերում կարող ես դու վարվել, ինչպես կամենաս:
- 3) Ես կարդացել էի բոլոր գրքերը՝ այդ մեկից բացի:
- 4) Գնացել եմ թե աշխատանքի, այլ մեկնել է հանգստի:

**31** ճիշտ նախադասություն ստանալու համար ո՞ր բառը պետք է տեղադրել նախադասության մեջ.

Մենք անհամբեր սպասում եինք, ..... բոլոր հյուրերը հավաքվեին:

- 1) մինչ
- 2) եթե
- 3) եթք
- 4) որ

**79** Ո՞ր պնդումը ճիշտ չէ Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի գաղափարական և գեղարվեստական հատկանիշների վերաբերյալ.

- 1) Սիրո ողբերգության պատկերումով Թումանյանը ցույց է տվել մարդկային հոգու դրաման, ներքին գեղեցկությունն ու վեհությունը:
- 2) Պատկերել է այնպիսի երևույթներ, որոնք ներքին բովանդակությանը ուղղված են նահապետական աղետավոր բարքերի դեմ:
- 3) Բազմամարդ տեսարաններում ստեղծել է նահապետական գյուղաշխարիի կյանքի ու կենցաղի, մարդկային հարաբերությունների գեղարվեստական ամբողջական պատկերը:
- 4) Արտահայտել է ազնիվ գործի ու հայրենասիրության գաղափարը տիպական կերպարների և բնորոշ պատկերների միջոցով:

Թվերի ո՞ր դասավորությունն է ճիշտ արտացոլում միջնադարի նշված հեղինակների ժամանակագրական հաջորդականությունը.

1. Ներսես Շնորհալի
2. Գրիգոր Նարեկացի
3. Նահապետ Քուչակ
4. Ֆրիկ
5. Սայաթ-Նովա

- 1) 2, 4, 5, 1, 3
- 2) 2, 1, 4, 3, 5
- 3) 1, 2, 3, 4, 5
- 4) 2, 1, 4, 5, 3

**77**

Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը.

Առաջ, երբ թուղթը դեռ հայտնի չէր, գրում էին մագաղաթի վրա: Մագաղաթն սկսել են գործածել մեզանից ավելի քան 2100 տարի առաջ: Այն պատրաստում էին մատղաշ անասունների՝ արջարի, երինջի, գառան, ուլի մորթուց՝ հատուկ լավ մշակելով և հղկելով: Դայերեն բազմաթիվ ձեռագրերուն պահպանվել են մագաղաթի պատրաստման դեղատոնմսեր: Դայերեն ամենամեծ ձեռագիր գրքի՝ 13-րդ դարի սկզբին գրված «Մշո ճառընտիրի» համար (այն սկզբուն ունեցել է 660 էջ, այժմ՝ 601) պետք է եղել 660 արջարի և երինջի մորթի: Իսկ հայերեն ամենափոքր, լուցկու տուրփից էլ փոքր ձեռագիր գրքի թերթերը պատրաստված են նորածին ուլի մորթուց: Այս երկու գրքերն ել պահպում են Մատենադարանում:

Երբ մարդիկ սկսեցին գրելու համար գործածել թուղթը, մագաղաթն աստիճանաբար դուրս եկավ գործածությունից, թուղթը ոչ միայն շատ ավելի հարմար է, այլև ավելի էժան:

- 1) 2100 տարի առաջ մագաղաթը պատրաստում էին մատղաշ անասունների մորթուց, այնուհետև նորածին ուլի:
- 2) Մագաղաթյա մատյանները պահպում են Երևանի Մատենադարանուն, քանի որ մագաղաթը շատ քանկ արժե:
- 3) Մագաղաթի պատրաստման դեղատոնմսերը մեզ հայտնի են հայերեն ամենափոքր ձեռագիր գրքից:
- 4) Դայերեն ամենամեծ ձեռագիր գիրքը նախապես բաղկացած է եղել 660 էջից. այժմ դրա 601 էջերը պահպում են Մատենադարանուն:

**78**

Նշված գաղափարներից ո՞րը գեղարվեստական մարմնավորում չի ստացել Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքուն.

- 1) Լյանքի բանաստեղծական ընկալում
- 2) Լյանքի հոգսերի մեջ կորած և շրջապատի կողմից անտեսված գեղեցկություն
- 3) մթնաձորյան բնորոշ իրականություն
- 4) կորսված հայրենիքի ողբերգություն

**32**

Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը ծիշտ փոխակերպված պարզ նախադասության.

Զբոսաշրջիկները անպայման դադար էին առնում այդտեղ, եթե հեռվից էին գալիս:

- 1) Հեռվից եկող զբոսաշրջիկները անպայման դադար էին առնում այդտեղ:
- 2) Զբոսաշրջիկները հեռվից գալու դեպքում անպայման դադար էին առնում այդտեղ:
- 3) Զբոսաշրջիկները, հեռվից գալով, անպայման դադար էին առնում այդտեղ:
- 4) Զբոսաշրջիկները անպայման դադար էին առնում այդտեղ հեռվից գալիս:

**33**

Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի.

- 1) Դրախտի բույրերի մեջ Աղամը Լիլիթի բույրն էր գգում սոխակների երգերի մեջ լսում էր նրա ձայնը:
- 2) Ես ամեն ինչ նկատեցի կնոջ հուզմունքը ամուսնու բռնազբոսիկ անտարբերությունը երեխաների շփորվածությունը:
- 3) Սենյակի կահույքը շատ խղճուկ էր մահճակալը կոտրված էր պահարանի դրները խազխազված էին արռողներ չկային:
- 4) Չմեռային մի երեկո մենք ծանրթացանք ես հաճախ եմ հիշում այդ ձմեռը և մտերմացանք, բայց մեր ընկերությունը երկար չտևեց:

**34**

Ո՞ր նախադասության մեջ հատկացուցչի վրա բութ պիտի դրվի.

- 1) Որքա՞ն արհամարհանք կար այդ աղքատ օրիորդի զայրույթից շառագունած դեմքին:
- 2) Ոսկանը հանեց Ստեփանոսի արդեն խունացած նամակը և կարդաց նրա տագնապալի նախազգուշացումները:
- 3) Գյուղում օրեցօր ավելանում էր Անդրեասի թրծած կավից շինված տների թիվը:
- 4) Թափուտների միջից հազիվ նշմարվում էին Սամվելի նախահայրերի կառուցած եկեղեցու խաչապսակ զմբեթները:

**35** Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա.

- 1) Զգույշ է միրհավը, և դժվար է միրհավին խփելը:
- 2) Ապարանքի մուտքի մոտ երևաց արարողապետը, ճաղատ գլխով տարեց մի մարդ:
- 3) Այդ բաղաքում նա չուներ ոչ մի ընկեր, ոչ մի բարեկամ:
- 4) Մթնել էր, և արդեն ցուրտ էր:

**36** Եղիշե Չարենցի հետևյալ տողերում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված.

Յազար վարդ կրացվի աշխարհի մեջը,  
Յազար աչք կրացվի աշխարհի մեջը,  
Յազար սիրտ կիսոցվի աշխարհի մեջը...

- 1) համեմատություն
- 2) հակադրություն
- 3) հանգույց
- 4) հեգնանք

**37** Նախադասությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը.

1. Օդի ամեն շարժում դադարում է, տորն է տիրում, իսկ թռչունները թաքնվում են բներում կամ տեղից տեղ թռչելով՝ անհանգիստ ճշում, երկնքում էլ հայտնվում են չարագուշակ, մթամած ամպեր:
2. Իր տարերքի մեջ է մտնում փոթորիկը, որի թեժ պահին տիրող աղմուկը նման է իրետանային հրաձգության դղրոյունի:
3. Յայտնի է, որ փոթորիկի մոտենալն զգացվում է նրա առաջին կատաղի պոռքկումից դեռ շատ առաջ:
4. Այնուհետև սև ու վիթխարի մի ամապ սարսափելի արագությամբ պատում է երկինքը, շեշտակի հարվածում են ոռնացող քամու առաջին պոռքկումները, որոտում է ամպրոպը, կայծակի շլացուցիչ նետերը ճեղքում են խավարը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 1, 4, 2, 3
- 3) 1, 4, 3, 2
- 4) 3, 1, 2, 4

**76** Պարբերությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) քերականական և տրամաբանական ճիշտ կառուցվածքին.

1. Բոլորին լավ ծանոթ են, օրինակ, այսպես կոչված, ընկնող աստղերը, որ առաջանում են ասուաներից: Սովորական ասուաների զանգվածը չի անցնում գրամի տասնորդական մասերից, իսկ նրանց միջին արագությունը երկրի նկատմամբ 40 կմ/վ է:
  2. Երկնաքարերի անկման տեղում գոյանում են խառնարաններ, որոնց ձևերն ու չափերը կախված են երկնաքարերի հատկություններից: Ամենամեծ խառնարանը համարվում է ԱՄՍ-ի Արիզոնա նահանգի Բարինջեր խառնարանը: Նրա տրամագիծը համարյա մեկուկես կիլոմետր է, իսկ խորությունը՝ 180 մետր:
  3. Սովորաբար ասուաները քայլայվում և այրվում են օդում: Բայց նրանց մի մասը հասնում է երկրի մակերևույթին: Խոշոր ասուաների այդպիսի չայրված մնացորդները կոչվում են երկնաքարեր: Տարեկան երկրի մակերևույթին են հասնում 200 տոննա ընդհանուր զանգվածով միլիոնավոր երկնաքարեր:
  4. Կարո՞ղ պատահել, որ տիեզերական մարմինների ճանապարհները հատվեն, և բախում տեղի ունենա: Այդպիսի երևույթներ լինում են, այն էլ բավականին հաճախ:
- 1) 4, 3, 2, 1
  - 2) 2, 1, 4, 3
  - 3) 1, 4, 3, 2
  - 4) 4, 1, 3, 2

**73**

**Նախադասություններից քանի ուն կետադրական սխալ կա.**

1. Փրկրադեգ գետի մյուս ափին՝ գյուղի դիմաց ընկած սաղարթախիտ անտառի բացատում, բոցավառվում էր խարույկը:
  2. Կրակը մեկ հանդարտվում էր, մեկ վեր սլանում, և միլիոնավոր կայծեր ցրվում էին ականակիր խավարի մեջ:
  3. Ասես՝ հսկա մի աստղ էր թարտում հինավուրց կաղամախիների, թիվիների և բոխիների արանքում:
  4. Խարույկի վրա կախած կաթսայի մեջ եռում էր ջուրը՝ թշջալով թափվում կրակի վրա:
  5. Երկու հնձվոր երեկոյան սառնությունից պաշտպանվելու համար թիկնել էին խոտի խրձերին:
  6. Յօհիսիմեն երեմն մասրենու ձողով խառնում էր կաթսան, մի կարտոֆիլ հանում, մատներով սեղմում ու տեսնելով, որ կիսաեփ է մեջը գցում:
- 1) մեկուն  
2) երկուսում  
3) երեքում  
4) չորսում

**74**

**Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ.**

– Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, իրաշք դյուրական:

(Ա. Իսահակյան)

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) աստիճանավորում
- 4) շրջադասություն

**75**

**Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ վարչական (պաշտոնական) ոճին.**

- 1) կաղապարային բառակապակցությունների գործածություն
- 2) կամոնակարգված շարադասություն
- 3) հուզականություն և խոսողի անձնական վերաբերմունքի դրսնորում
- 4) հանդիսավորություն և դերբայական դարձվածների հաճախակի գործածություն

**38**

**Ո՞ր հայերենով է շարադրված հետևյալ նախադասությունը.**

«ճանաչել զիմաստութիւն եւ գխրատ, իմանալ զբանս հանձարոյ»:

- 1) արևելահայերեն
- 2) արևմտահայերեն
- 3) միջին հայերեն
- 4) գրաբար

**39**

**Ո՞ր բանաստեղծական շարքում են ամփոփված Վահան Տերյանի հայրենասիրական բանաստեղծությունները.**

- 1) «Մբնշաղի անուրջներ»
- 2) «Երկիր Նաիրի»
- 3) «Գիշեր և հուշեր»
- 4) «Ուսկի հեքիաթ»

**40**

**Ո՞ր պատմիչի խոսքերն են.**

«Զկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:

- 1) Ղազար Փարպեցի
- 2) Եղիշե
- 3) Ագաթանգեղոս
- 4) Մովսես Խորենացի

**41**

**Ո՞ւմ միջոցով է հանելուկը մուտք գործել հայ գրականություն, մշակվել ու դարձել գրական նոր տեսակ.**

- 1) Ներսես Շնորհալի
- 2) Խաչատուր Աբովյան
- 3) Խահապետ Քուչակ
- 4) Գրիգոր Նարեկացի

**42**

**Սայաթ-Նովայի նշված բանաստեղծություններից ո՞րը սիրո երգ չէ.**

- 1) «Թամամ աշխար պտուտ էկա»
- 2) «Աշխարումս ախ չիմ քաշի»
- 3) «Վունցոր վուր դարիք բլբուլ»
- 4) «Աշխարս մե փանջարա է»

**43** Պետրոս Դուրյանի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը.

Ե՞հ, մնաք բարով, Աստված և արև,  
Որ կը պրայրաք իմ հոգվույս վերև...  
Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուլ երկնից...

- 1) «Լճակ»
- 2) «Տրտունջք»
- 3) «Իմ մահը»
- 4) «Իմ ցավը»

**44** Ռաֆֆին «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է նկարագրում Սամվելի և նրա հոր՝ Վահան Մամիկոնյանի հանդիպումը.

- 1) «Արաքսի որոգայքները»
- 2) «Փակագծերի մեջ»
- 3) «Մեկը՝ արևելքում, մյուսը՝ արևմուտքում»
- 4) «Արարատյան դաշտի առավոտը»

**45** Ո՞վ արևմտահայ հեղինակ չէ.

- 1) Մուրացան
- 2) Դանիել Վարուժան
- 3) Միսաք Մեծարենց
- 4) Գրիգոր Չոհրապ

**46** Եղիշե Զարենցի ո՞ր ստեղծագործությունն է Վիշամ Սարյանը անվանել ««Հայր մեր»-ին ննանվող աղոթք մը».

- 1) «Վահագն»
- 2) «Գանգրահեր տղան»
- 3) «Ելի գարուն կգա, կբացվի վարդը...»
- 4) «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...»

**71** Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ.

-Երբ բոլորը հավաքվեք, ինձ էլ կկանչեք,-հանձնարարեց թագուհին և ապա, դառնալով իշխաններին, ավելացրեց.-անշուշտ, վեհափառն էլ կօգնի մեզ իր խորհուրդներով:

- 1) Թագուհին հանձնարարեց և ապա, դառնալով իշխաններին ավելացրեց, որ երբ բոլորը հավաքվեն, իրեն էլ կանչեն. անշուշտ, վեհափառն էլ կօգնի իրենց իր խորհուրդներով:
- 2) Թագուհին հանձնարարեց, որ երբ բոլորը հավաքվեն, իրեն էլ կանչեն, և ապա, դառնալով իշխաններին, ավելացրեց, որ, անշուշտ, վեհափառն էլ կօգնի իրենց իր խորհուրդներով:
- 3) Թագուհին հանձնարարեց իշխաններին և ապա ավելացրեց, որ երբ բոլորը հավաքվեն, իրեն էլ կանչեն. անշուշտ, վեհափառն էլ կօգնի իրենց իր խորհուրդներով:
- 4) Թագուհին հանձնարարեց, որ երբ բոլորը հավաքվեն, իրեն էլ թող կանչեն, և ապա, դառնալով իշխաններին, ավելացրեց, որ, անշուշտ, վեհափառն էլ կօգնի նրանց իր խորհուրդներով:

**72** Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում նախադասության մեջ բութ պիտի լինի.

Ասում են (1) Մարկ Տվենը (2) ամերիկացի հանրաճանաչ գրողը հայտնի էր իր ցրվածությամբ: Մի անգամ (3) երբ ճամփորդում էր գնացքով նրա խցիկին է մոտենում հսկիչը (4) ստուգելու թե նա տոնս ունի: ճանաչելով Մարկ Տվենին (5) հսկիչը անչափ ուրախանում է (6) նրան բախտ էր վիճակվել տեսնելու անվանի գրողին և նույնիսկ (7) խոսելու նրա հետ: Իսկ Տվենը արագ-արագ պրատուն է գրապանները: Ապարդյուն տոնսակը չկար ու չկար:

Պարոն խնդրում են (8) մի անհանգստացեք սիրալիր ժպիտով ասում է հսկիչը: Եթե չգտնեք էլ հոգ չէ:

Ոչ ինչ էք ասում առարկում է Տվենը (9) հուզված նյարդայնացած ես անպայման պիտի գտնեմ անիծված տոնսը այլապես ինչպես իմանամ (10) ուր եմ գնում:

- 1) 2, 4, 5, 8, 9, 10
- 2) 1, 2, 4, 6, 8, 9
- 3) 2, 4, 5, 6, 7, 8, 10
- 4) 1, 2, 4, 5, 10

**69**

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կատացվի.

Երբ լեռան հետևից ելնում է արևը, -----  
-----, որոնք շողջողում են ջինջ արցունքի նման:

- 1) ցրվում են երկնքում կուտակված գորշ քույսապերը
- 2) լեռներից գահավիժում են աղբյուրների պաղպաջուն ջրերը
- 3) հորիզոնում հետզիետե նշմարվում են նոր հերկած արտերը
- 4) տամկացած մամուռից պոկվում են անձրևի կաթիլներ

**70**

Ո՞ր տարբերակում է պարզ նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդ ստորադասական նախադասության.

Փողոցները հեղեղած մարդկանց բազմությունը ռազմաշունչ կոչեր էր վանկարկում:

- 1) Մարդկանց բազմությունը, որ հեղեղում էր փողոցները, ռազմաշունչ կոչեր էր վանկարկում,
- 2) Մարդկանց բազմությունը, որը հեղեղել էր փողոցները, ռազմաշունչ կոչեր էր վանկարկում:
- 3) Այն մարդկանց բազմությունը, որոնք հեղեղել էին փողոցները, ռազմաշունչ կոչեր էր վանկարկում:
- 4) Բազմությունը, որը փողոցները հեղեղած մարդիկ էին, ռազմաշունչ կոչեր էր վանկարկում:

**47**

Ո՞վ է «Հուշարձան մայրիկիս» ժողովածուի հեղինակը.

- 1) Ավետիք Իսահակյան
- 2) Պարույր Սևակ
- 3) Զամո Սահյան
- 4) Հովհաննես Շիրազ

**48**

Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ.

1. Ես ձուկ ու դու ջուր, հոգի՝, առանց ջուր՝ ձուկըն մեռանի
2. Ես աչք ու դու լոյս, հոգի՝, առանց լոյս՝ աչքըն խաւարի
3. Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի
4. Երբ զձուկն ի ջըրէն հանեն ւ'ի այլ ջուր ձըգեն, նայ ապրի  
(Նահապետ Քուչակ)

- 1) 2, 1, 3, 4
- 2) 4, 3, 2, 1
- 3) 2, 1, 4, 3
- 4) 4, 1, 3, 4

**49** Տրված հատվածներից յուրաքանչյուրը ձախ կողմում նշված հեղինակներից որևէ մեկին է. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- |                     |  |
|---------------------|--|
| ա. Պարույր Սևակ     | 1. Դու միակ բարի, դու միակ իմ սեր, դու միայն սուրբ, սուրբ, մայրական դու գիրք...  |
| բ. Եղիշե Չարենց     | 2. Եմ մահվան օրը կիջնի լոռություն, Ծանր կնստի քաղաքի վրա, Ինչպես ամպ մթին կամ իին տրտմություն Կամ լուր աղետի՝ թերթերում գրած:            |
| գ. Վահան Տերյան     | 3. Ցավը տվեց սարերին՝ սարերը չտարան...   |
| դ. Յովհաննես Շիրազ  | Ցավը տվեց մարդուն՝ Մարդը տարավ:  |
| ե. Ավետիք Իսահակյան | 4. Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել, Որ սուրբ հողըդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը, Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը: |
- 1) ա - 1, բ - 3, գ - 4, դ - 2  
 2) ա - 4, բ - 2, գ - 3, դ - 1  
 3) ա - 3, բ - 1, գ - 2, դ - 4  
 4) ա - 4, բ - 2, գ - 3, դ - 1

**50** Ո՞րը դրամատուրգիայի երեք հիմնական տեսակներից (ժամրերից) չէ.

- 1) կատակերգություն
- 2) դրամա
- 3) ողբերգություն
- 4) վիաերգ

**66** Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա.

- 1) Վահրամը մեկ ամսում առաջ անցավ իր բոլոր դասընկերներին:
- 2) Տղան մի կերպ կառչեց քիվին, որ վայր չընկնի:
- 3) Դուք ո՞չ մարդու արժանիքներն եք հաշվի առնում, ո՞չ նրա վաստակը:
- 4) Քանձին պարոն Վարդանյանի՝ դպրոցը հիանալի տնօրեն ունի:

**67** Ո՞ր նախադասությունն է կազմությամբ բարդ.

- 1) Երիտասարդը կանգնած էր օվկիանոսի ալիքներն ակոսող նավի տախտակամածին՝ մտքերի մեջ խորասուզված, շրջապատը լիովին մոռացած, հայացքը դեպի հեռուներն ուղղած:
- 2) Առանց որևէ բար արտաքերելով՝ նա արագ-արագ հավաքում էր սենյակով մեկ թափթփված թղթերը՝ երեմն-երեմն մի հայացք գցելով պատից կախված հնաօճ ժամացույցին:
- 3) Խորհուրդ են տվել՝ տանը մնամ:
- 4) Արամը՝ հորաքրոջ որդին, նրան վաղուց է ծանաչում:

**68** Ո՞ր դեպքում է ստորադաս (Երկրորդական) նախադասությունը ենթակա.

- 1) Թվում էր, թե փրկության ոչ մի հույս չկա:
- 2) Այն այցելուները, որոնք բժշկին վաղուց էին ծանաչում, ամենին չէին զարմացել:
- 3) Գրքերից միայն նրանք կվերցնես, որոնք քեզ պետք են գալու:
- 4) Բակում կանգնած էին նի խունք ծերունիներ, որոնք հանգուցյալի մանկության ընկերներն էին:

**63**

**Անցյալ կատարյալի նշված ձևերի ո՞ր շարքում սխալ չկա.**

- 1) թռավ, խոսեցրեցի, եկան, զարկեցին
- 2) բերեցի, ասեցի, մտան, առան
- 3) նստացրին, հնչեց, մոռացան, չնվագեցին
- 4) կերան, եղավ, վագեցրին, դիպավ

**64**

**Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ կիրառություն կա.**

- 1) Մի շարք երկրներուն հարցուն էին արել, որպեսզի ինանային, թե ինչ վարկանիշ ունի Միացյալ Նահանգների նախագահը:
- 2) Ազգային ժողովի մի քանի պատգամավոր այնպիսի առաջարկ ներկայացրին, որպեսզի այդ օրինագիծը վերադարձվի քննարկման ու լրամշակման:
- 3) Որպեսզի ծիրանի բարձր բերք ստացվի, անհրաժեշտ է ժամանակին կազմակերպել թե՛ էտը, թե՛ վճասատուների դեմ պայքարը:
- 4) Իսկ ծառատունկից հետո էլ անհրաժեշտ է ամբողջ տարածքը շրջափակել փշալարերով, որպեսզի խոտակեր կենդանիները չփչացնեն տունկերը:

**65**

**Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (տեղադրվելիք բառերը տրված են ուղիղ ձևերով).**

Նա ..... ամենափոքրն էր, և իբրև ընտանիքի .....՝ ծնողները նրան կարծես ավելի շատ էին սիրում ու ..... նրա որևէ ցանկության, նույնիսկ երես էին տալիս՝ դույզն-ինչ ..... հետևանքների մասին:

(1. կրտսեր, 2. ընդդիմանալ, 3. մտածել, 4. երեխա)

- 1) 1, 4, 3, 2
- 2) 4, 2, 1, 3
- 3) 1, 2, 3, 4
- 4) 4, 1, 2, 3

## Բ ՄԱԿԱՐԴԱԿ

**51**

**Ո՞ր օրինակում է սխալ նշված տառի կամ տառակապակցության թվային արժեքը.**

- 1) Ա – 1
- 2) Օ – 100
- 3) Ժ – 13
- 4) ԻԵ – 25

**52**

**Ո՞ր բառում արմատի հնչյունափոխություն չկա.**

- 1) համբուրել
- 2) սիգաճեմ
- 3) մշտավառ
- 4) երգչախումբ

**53**

**Համարակալված բառերում բաց թողած տառերը պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.**

**Յա–շտապ(1) բացեց ձեռագրերի ժողոված–ի(2) վերջին էջը:** Կարդաց. «Նորընծա արքան, իր աշխետ ձին հեծած, մի քանի հարյուր–կ(3) կտրի–ներով(4) ազատեց երկիրը սև թու–պերից(5) ու պ–տոր(6) հեղեղներից: Նա փրկեց ժողովրդին գեր–արությունից(7) ու հասավ մինչև Նինվ–ի(8) դարպասները»: Յազիվ էր ավարտել ընթերցումը, երբ միջանցքից ոտնաձայ–եր(9) լսվեցին: Նա գիր–(10) վեր կացավ տեղից և բացեց դուռը:

- 1) 1 - փ, 2 - ու, 3 - յա, 4 - ճ, 5 - խ, 6 - եպ, 7 - եյ, 9 - ն, 10 - ք
- 2) 1 - պ, 2 - ույ, 3 - յա, 4 - չ, 5 - խ, 6 - դ, 7 - և, 8 - ե, 9 - ն, 10 - գ
- 3) 1 - պ, 2 - ու, 3 - յա, 4 - ճ, 5 - խ, 6 - դ, 7 - եպ, 8 - ե, 9 - ն, 10 - ք
- 4) 1 - պ, 2 - ու, 3 - ա, 4 - ճ, 5 - դ, 6 - դ, 7 - եպ, 8 - ե, 9 - նն, 10 - ք

**54** Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ կա.

- 1) հագեցնել, ակնակապիճ, աստղիկ, հատընտիր
- 2) բարձրաբերձ, ընդհանրապես, կասեցնել, պազշոտ
- 3) կապտաթույր, ծաղկազարդ, սանրվածք, խոսեցնել
- 4) վերջնահաշվարկ, նանրավաճառ, օրիներգ, մոտեցնել

**55** Ո՞ր շարքում բառակապակցության իմաստի սխալ բացատրություն կա.

- 1) մեղուների խումբ - պարս, դանակի շեղի սուր կողմը - սայր
- 2) գիտական ենթադրություն - վարկած, գինի մատուցող - պատրվակ
- 3) առյուծի ձագ - կորյուն, մետաղե պաշտպանիչ գլխարկ - սաղավարտ
- 4) փայտագործ վարպետ - ատաղձագործ, հատիկների կույտ - շեղջ

**56** Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն.

- 1) Ես չեմ **կարող** այդ դժվար հարցին պատասխանել:
- 2) Զեռնարկությունը կարիք ունի տարբատ **կարող** վարպետի:
- 3) Մեր գրասենյակի ամենից **կարող** և խելացի աշխատակիցը Գագիկն է:
- 4) - **կարող** է պատահել, որ հենց այդպես էլ եղել է, եզրակացրեց զրուցակիցս:

**57** Տրված բառիմաստները համապատասխանում են աջ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- |                                |            |
|--------------------------------|------------|
| 1. ճյուղերից հյուսված զամբյուղ | ա. ուրագ   |
| 2. փայտամշակման գործիք         | բ. գահույք |
| 3. ստեղծագործության հատված     | գ. դրվագ   |
| 4. փոքր գավաթ                  | դ. կողով   |
|                                | ե. ընպանակ |

- 1) 1 - ա, 2 - դ, 3 - բ, 4 - գ
- 2) 1 - դ, 2 - ա, 3 - գ, 4 - ե
- 3) 1 - բ, 2 - ա, 3 - ե, 4 - դ
- 4) 1 - դ, 2 - ա, 3 - գ, 4 - բ

**58** Ո՞ր բառի արմատներից մեկին կմիանա **-ում** ածանցը և բառ կկազմի.

- 1) ենթամնա
- 2) երեսնական
- 3) միջանկյալ
- 4) եռագագար

**59** Ո՞ր դեպքում է դարձվածքի իմաստը սխալ բացատրված.

- 1) անարգանքի սյունին գամել - խայտառակ անել
- 2) թևերի տակ առնել - աննկատ շահագործել
- 3) բարկը մոռանալ - խիստ շփոթվել
- 4) երկու ոտքը մի կոշիկի մեջ դնել - իր ասածը համառորեն պնդել

**60** Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է սխալ գործածված.

- 1) Զուր կապելիս Լառ-Մարգարը ջրի հետ էլ գնում էր:
- 2) Ծրագիրը ներկայացնելուց անպայման կնշեք աշխատանքները կատարելու ժամկետները:
- 3) Տապալվող կաղնին ընկնելիս իր ճյուղերով կառչում է հարևան ծառերից:
- 4) Պարբերաբար վատ սմվելուց փոքրիկի մարմինը հյուծվել էր:

**61** Ո՞ր նախադասության մեջ **մ-ն** ցուցական հոդ չէ.

- 1) Վերջին ժամանակներս նա հաճախ է այցելում քեզ:
- 2) Տեղիս բնակիչների մեջ մասը հայեր են:
- 3) Երկուսս էլ մասնակցեցինք մրցույթին:
- 4) Աշխարումս ախ չիմ քաշի...

**62** Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ կա.

- 1) Ես իմ անուշ Յայաստանի արևահամ բառն եմ սիրում...
- 2) Ահով ահա կանչում եմ քեզ, Ցոլա՛, ցնո՞րք Նաիրի...
- 3) Եկան, երգեցին Սի հին իրիկուն գուսանները ծեր...
- 4) Ես մոլորվել եմ շատ անգամ, Դու ինձ ների՛ր, իմ ժողովուրդ...